

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԷՆ ԴՈՒՐՍ

Այն Հայերու խումբերը, որոնք, մեր աղէտքներէն յետոյ, աշխարհիս զանազան կողմերը ցրուեցան և եկան ստուարացնել արդէն կազմուած գաղութները կամ նոր կայքեր հաստատեցին, ինչ զազափար ներշնչեցին՝ իրենց բարքովարքովը՝ օտարներուն որոնց մէջտեղ սկսան ապրիլ:

Անուրանալի է որ Հայերը, երբ ջարդերէն յետոյ շունչերնին Եւրոպա ու Ամերիկա առին, համակրանքի ու կարեկցութեան զրեթէ ընդհանուր զգացում մը պատրաստ ու արթուն գտան իրենց շուրջը: Ասիկա՝ բնական արգասիքն էր այն արգահատանքին զոր մեր տառապանքին ահագնութիւնը յառաջ բերած էր աշխարհի ամէն կողմը, և այն տեսակ մը ամօթահարութեան զոր այդ Եւրոպացիներն ու Ամերիկացիները կը զգային անտարբերութեանը համար զոր իրենց երկիրները հաւաքաբար ցոյց տուած էին այդ կազմակերպուած խողխողումներուն առջև, և այն վատ դասալքութեանը համար որով իրենց կառավարութիւնները հրաժարած էին պաշտպանել ժողովուրդ մը որ, բացի դաշնագրերով ընդունուած պարտականութիւններէ, մարդկութեան ու քրիստոնէութեան կրկնակ կապերովը կապուած էր իրենց: Համակրանքի ու կարեկցութեան այդ զգացումը, եթէ շատ տեղեր վերացական հանգամանք մը պահեց լոկ, շատ տեղեր ալ իր գոյութիւնը հաստատեց իրական ծառայութիւններով ու օգնութիւններով որոնք սարսափին առջեւէն փախտական վտարանդիներուն շաղկուեցան, անոնց զիրացնելու համար ապրելու տաժանքը, մեղմելու համար անոնց գնացքին արհաւիրքը՝ զաղանալի ու դժնդակ ճամբաներէ, ու կարելի եղածին չափ սրտապնդելու համար զանոնք այն դաժան ոգորումներուն համար որ այնուհետեւ իրենց բաժինը պիտի ըլլային օտար ու անձանօթ հեղբու վրայ: Խղճմտանքի տեսակ մը հաշուեյարգարութիւն էր ասիկա, որ իր բարիքները ունեցաւ հարիւրաւոր Հայերու համար:

Կրնանք ըսել այսօր թէ այդ զգացումը ամբողջական ու անխոռ փնացած է այն օտարներուն մէջ որոնց հետ

կ'ապրինք: Կրնանք ըսել թէ ջարդերէն յետոյ մեզի նրկատմամբ արթնցած բարեացակամ տրամադրութիւնները պակասած կամ իսպառ անյայտացած չեն այն օտարներուն մէջ որոնք առիթ ունեցան Հայերու հետ զործելու կամ զանոնք մօտէն ճանչնալու:

Դժուարին հարցում, անոր համար որ, օտարները, ինչ կարծիք ալ կազմած ըլլան այսօր մեզի նկատմամբ, տակաւին տեսակ մը խղճահարութիւն կը պահեն իրենց մէջը՝ հրապարակաւ յայտնելու այդ կարծիքը երբ մեզի աննպաստ է ան: Շատ հասկնալի փափկանկատութեամբ մը, կը վարանին հարուած մըն ալ իրենց տալու՝ այնքան անխնայ ու այնքան ահեղօրէն զտրնուած ցեղի մը: Վերջերս Լոնտոնի մէջ Հայ երիտասարդ մը ձերբակալուեցաւ դրամակենցաղոտքեակ համար, ու ստիկանական դատարանէ մը մէկ տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտուեցաւ: Եւ սակայն անպիական թերթերը միահաղոյն, կարծես կարգախօսի մը հետեւելով, զանց ըրին այդ լուրը հաղորդել իրենց դատական առօրեայ մանրամասն քրոնիկին մէջ, չվնասելու համար այն վարկին զոր մեր ցեղը քիչ շատ կը վայելէ այս երկրին մէջ:

Ի նկատ առնելով այս հանգամանքը, անկեղծօրէն եւ անաշառօրէն յայտնուած կարծիքներու այս բացակայութիւնը, կարելի չէ ուրեմն վճռական պատասխան մը տալ հարցումին զոր քիչ մը վերը ըրի:

* * *

Բայց, եթէ օտարներու վկայութիւնները կը պակսին մեզի, ատիկա պատճառ մը չի կրնար ըլլալ ենթադրելու թէ մեզի նկատմամբ միշտ համակրական է իրենց զգացումը: Տխուր իրողութիւնը այն է թէ բարքերու ապականութեան յայտարար այնքան առատ նշաններ տեսնուեցան մեր մէջը որ կարելի չէ պահ մը տարակուսիլ ատոնց յառաջ բերած ազդեցութեանը վրայ:

Բերնէ բերան պատմուած հարիւրաւոր եղելութիւններ կը հաստատեն ասիկա, ու արտասահմանի մէջ հրատարակուած լրագիրներու այս վերջին չորս տարուան հաւաքածոյին թերթումը՝ կսկծելի ընթերցում մը պիտի ըլլար ապահովապէս ամէն զգայուն Հայու համար: Հոն պիտի գտնէինք Հայ անունը խառնուած պատժական օրի-

նադրքին ամէն զրուհներուն աշխարհի զանազան կողմերը, — բան մը գուրս չթողլով տխուր շարքէն, մարդասպանութիւն, զոդութիւն, անչափահասներու բռնաբարում, վստահութեան զեղծում, կեղծարարութիւն, խարդախութիւն, խաբեբայութիւն, հանրային բարեկարգութեան խանգարում եւայլն:

Չեռքիս տակ ունիմ Նիւ-Եորքի Տիգրիսին 1898 յունիս 23ի թիւը՝ ուսկից կը քաղեմ հետեւեալ լուրերը.

— Բրուքլինի Պոլիտեքնիկ լրագիրը կ'ըսէ թէ անցեալ շաբթու Բ. Մ. Եան անձը քաղաքին Մէնթըն Ալընիւին վրայ կին մը բռնաբարած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալուած ու յանցանքը խոստովանած ըլլալով, 10 տարուան բանտարկութեան դատապարտուած է:

— Յունիս 20ին Փօլ Րիվըր ձերբակալուեցաւ Խարբերդի Աղնցիկ զիւղէն Օ. անուն Հայը իր աշխատած գործարանէն մեծաքանակ կտաւ գողցած ըլլալու ամբաստանութեամբ: Ոստիկանութիւնը այս անձին իրանտացի տարփուհիին սենեակը խուզարկելով, գողօնին մէկ մասը ձեռք ձգեց: Այս մարդը կին մը ու երկու զաւակ ունի հայրենիքը: Կնոջը զրած էր. «Ես հոս ամուսնացած եմ, դուն ալ զխուզ ճարը տես հոգ»:

— Պոսթոնի մէջ ոստիկանութիւնը ձերբակալեց Պ. անուն Հայ մը որ իր ընկերին՝ Մ. Չ. անուն Հայուն՝ մէկ մատանին զրաւի զրած էր 75 տուարի, եւ զրամը զրպանած:

— Մանչէսթըրի կառավարիչը իր ջովը կանչած ու յանդիմանած է Չմշկածագցի Կ. Է. սափրիչ խանութպանը, որ տեղին Հայերէն ոմանց պատուոյն գէմ ծանր խօսքեր ըրած էր: Ետա մը Հայեր առանձին հանրագրութեամբ պիտի դիմեն կառավարչին, խնդրելով որ այդ Հայը դուրս հանուի Մանչէսթըրէն:

Այս բոլոր դէպքերը մեկ բիշէ մըն են: Աւելորդ է ըսել որ եթէ, օրինակի համար, եռամսեայ թիւերուն վերայ նոյն քաղուածքը կատարէի, ցանկը սինակներ պիտի գրաւէր:

Վառնայի Իրաւունքն ալ այդպիսի աշխատութեան մը նիւթերը պիտի կրնար հայթայթել մեզի: Իր վերջին թիւերէն մէկուն մէջ կը կարդայինք թէ երկու Հայ, Գասապ Գիրգոր և Մէհանէճի Աւետիս Յակոբեան, սպաննած են խահուէճի Ստեփան Սանտալճեանը, ամէնէն սիրուած պատուական ու ազնիւ Հայ մը որ «մենծ ախպար» անունով կը ճանչցուէր, եւ վիրաւորած առոր եղբայրը Խաչիկ: Ոճրին իբր պատճառ ցոյց կը տրուի նախանձը և շարակնութիւնը զոր մարդասպանները ունէին Ստեփանի գտած նիւթական յաջողութեանը համար: — Դարձեալ Վառնայի մէջ չէր որ մահուան դատապարտուեցան վերջերս երկու Հայ, որոնց կեանքը շնորհած է հիմա Պուկարիոյ իշխանը՝ իր ծննդեան տարեգարձին առթիւ:

* * *

Այս դէպքերէն մեր քաղաքը եզրակացութիւնը ինչ ալ ըլլայ, ատոնք կը բաւեն քաղաքակիրթ աշխարհին առջեւ մեր ունեցած միակ ոյժը, մեր բարոյական վարկը, խորտակելու քանդելու:

Եթէ մենք ուզենք իսկ իբր անհասական եղելութիւններ նկատել ատոնք, որոնք պէտք չէ խնդրի տակ ձգել տան մեր ցեղին հաւաքական բարոյականութիւնը, չենք կրնար նոյնը պահանջել օտարներէն: Ետա բնական ու անխուսափելի բերումով մը, ամէն Հայ իր ցեղին ներկայացուցիչը կը նկատուի օտարէն, որ պատեհութիւն կամ տրամադրութիւն չունի մեր ցեղը ուսումնասիրելու իր հաւաքական յատկութիւններուն մէջ: Դատելու այս եղանակը ո՛րքան ալ սխալ կամ միակողմանի ըլլայ, պէտք է միշտ հաշուի առնենք զայն իբր ամէնէն աւելի ընդհանրական ու սովորական եղանակը: Չէ՛ մի որ ամէն մարդ ալ նոյն այդ բերումին կը հետեւի՝ իր փորձառութեանը վրայ հիմնուելով գտելու համար օտար ժողովուրդ մը որուն մէկ անդամին հետ յարաբերութիւն ունեցած է:

Բայց, իբր Հայ, մեր մտածումը ինչ պէտք է ըլլայ այս երեւոյթներուն առջև՝ որոնց յաճախութիւնը կարծուածն աւելի արմատացած չարիքի մը գոյութիւնը կը մատնէ:

Ես շատ Հայեր կը ճանչնամ որոնք ամէն անգամ որ իրենց ցեղին նկատմամբ խօսելու առիթը ունենան ազգակիցներու հետ, ամօթի ու յուսահատութեան բառեր ունին իրենց շրջներուն վրայ: Իրենց խօսքով, անգարմանելի փտութեան մը նշանները երևան բերին Հայերը իրենց երկրէն դուրս: Հայրենի հողին վրայ ամէն բան ծածկուած կը մնար. ու յետոյ, թիւրք ողբալի վարչութիւնը ո և է միջոց մը չի հայթայթեր մեզի թիւրքիոյ եղեռնական վիճակագրութեան մէջ — եթէ այդպիսի բան մը գոյութիւն ունի — Հայերուն բերած բաժինը որոշելու: Օտար երկիրներու մէջ, ընդհակառակը, իւրաքանչիւր ոճիր կամ յանցանք որ Հայերու կողմէ ի գործ կը դրուի, անմիջապէս աչքի կը զարնէ, ու երևան կը բերէ թաքուն ապականութիւն մը որուն վրայ գաղափար չունէինք առաջ:

Անտանիշերը ծանր են աներկբայ, և զանսնք ուրանալով չէ որ պիտի կրնայինք հիւանդութեան ընթացքը կասեցնել: Բայց ա՛յն աստիճանին հասած են արդէն, որ յուսահատութեան խօսքեր ընել ներքի ըլլայ:

Անշուշտ ո՛չ: Ու այն օրը որ յուսահատինք մեր ցեղին բարեւաւման ու բարոյացման կարելիութիւններէն, այն օրը մեր գոյութեան իրաւունքը կորսնցուցած պիտի ըլլայինք:

Սա իրաւ է որ խորապէս, հիմնապէս ըմբռնելու ենք թէ մեզի համար կենսական պէտք մըն է ո և է ջանք չինայել մեր ցեղը առաջնորդելու համար զէպի բարոյականութիւն, զէպի առողջ ու մաքուր բարքեր, զէպի ուղիղ ու ամուր սկզբունքներ: Խորհող ու զգացող Հայերը կը զգան այն պէտքը: Տիգրիսի այն թիւին մէջ իսկ զոր քիչ մը վերը կը յիշէի, կը գտնեմ ուրիշ լուր մը որ նորօրինակ երևոյթ մը կը ցուցնէ մեր մէջը. «Թրոյի Հայոց

ոմանց բարոյական անկեալ վիճակը նկատողութեան առնելով, քաղաքին Հայերը ընդհանուր ժողով մը ունեցած են ամսուս 19ին, ուր յանձնախումբ մը ընտրուած է Հայոց բարոյականին բարձրացման համար աշխատելու պաշտօնով:»

Ահաւասիկ շատ գեղեցիկ առաջադրութիւն մը, որ շատ ազնիւ կամեութիւններ կ'ենթադրէ զանոնք յաջողութեամբ մէջ: Բայց մեր ախտը կամ ախտերը բուժելու ձեռնարկելէ առաջ, հարկ է ճանչնալ զայն ճշգրտապէս, ու ասոր համար նորէն կ'ուզողքս այստեղ այն հրաւերը որով կը վերջացնէի վերջին յօդուածս այս նիւթին վրայ: Կր խնդրեմ բոլոր այն Հայերէն, սրունք իրենց ցեղը կը սիրեն ու անոր բարւոյն նախանձախնդիր են, Նոր Կեանքին զբոյս կեն իրենց մտածումը այն հարցերուն մասին սրունք այս յօդուածին նիւթը կը կազմեն, ու տեղեկացնեն մեզի այն բարքովարքը զոր հայ գաղթականները երեան բերին աշխարհի բոլոր այն կողմերը ուր զիպուածը նետեց զիրենք:

Լ. ՉՈՐԹՈՒՄԵՆ

ԱՐԻԻՆԻՆ ՅԱՃԱՒԱՆՔԸ

Տօնական քաղաքին վայելքի մարդկութեանը մէջ մեր պանդուխտ հոգիներուն վերաւոր որբութիւնը պատցոյնել յոգնած՝ ուզեցինք տուններնիս քաշուիլ:

Պուրվատին զինով ու վայրագ միտքէն հեռացած էինք արդէն, երբ բարեկամս կանգ առնելով՝

— Ինչ կէս զիշեր չի կայ, ըսաւ, եկուր ինծի երթանք, թէյ մը կը շինենք ու քիչ մըն ալ կը խօսինք...

Չլատուած՝ միտքս մինակ տուն գտնալու գաղափարէն՝ փութով ընդունեցայ իր հրաւերը ու մեքենաբար հետեւեցայ իրեն:

Հինաւորց տան մը ներքը բանտուած մութին մէջ գալարուող կոյր ու տաժանելի սանդուղէն վեց յարկ մազցելէ վերջ՝ բարեկամս բնակարանը մտանք:

Տանիքին տակ կ'ծկտած պզտիկ, տրտում մանսարտ մըն էր որուն գրեթէ կէսը կը բռնէր երկաթէ համետ անկողինը: Երկու հիւանդկախ աթոռներ, զիրքերով ու թուղթերով բեռնաւորուած սեղան մը ու եռոտանի ճղճիմ լաւապօ մը կ'ամբողջացնէին սենեակին կահաւորումը ու անկարելի կ'ընէին հող ու կ'անզգոյշ շարժում: Ծուռու մուռ մոխրագոյն պատերուն ծերութեան թափող մարմին վրայ այլանդակ հակադրութիւն մը շեշտող պատկերներէ՝ կնկան խօլ մերկութիւններ իրենց անառակ ու յաղթական երիտասարդութիւնը կը պարէին:

Բարեկամս թէյին պատրաստութեամբը զբաղած էր, երբ շմինէին վրայ՝ վրդովիչ նայուածքով աղջկան մը լուսանկարը ուշադրութիւնս գրաւեց:

— Ո՞վ է այս աղջիկը, հարցուցի շահագրգռուած: Բարեկամս, մէկէն, տարօրինակ կերպարանքով մը դարձաւ, ու լուռ, ինծի նայեցաւ վայրկեան մը: Յետոյ յուզուած ու ծանր շեշտով մը՝

— Կ'ուզե՞ս զիտնալ թէ ո՞վ է ատ աղջիկը... կեցի՛ր սա թէյը ըլլայ, ան ատեն կ'ըսեմ քեզի...

Երբ թէյը լմեցաւ, բարեկամս, անկողինն վրայ երկընցած, սիլառէթ մը վառեց ու սխաւ պատմել:

— Հինգ տարի է անկից ի վեր: Մտքիս մէջ պահած եմ, ցաւաղին ու միշտ ներքոյ, յիշատակը այն ամառ օրուան, ուր արևոտ գաշտերու մէջ երկար պտայտէ մը գարձիս՝ զայն մեր տունը գտայ: Բազմոցի մը խորը ողբալիօրէն կ'ծկտեմ էր ան մօրս ու ծեր կնկան մը մէջտեղ զոր բնաւ տեսած չէի:

Սիրանուշի տարօրինակ երևոյթը զիս վրդովեց մէկէն ի մէկ: Սենեակին սեւին վրայ կանգ առի շուտաբար: Անիկա ոչ մէկ շարժում ըրաւ զիս տեսնելուն ու անտարբեր նայեցաւ երեսո ի վեր, կարծես թէ զիս չճանչնար: Եւ սակայն հազիւ երկու տարի կար սր զիրար չէինք տեսած:

Հօրս գործերուն ստիպմամբ մեկնած էինք Կարինէն, ու Սիրանուշի ընտանիքին հետ մեր վաղնջական ու սիրալիբ զրացնութիւնը բաժանումի էն խոշոր ցաւերնիս եղած էր: Երբէն ի վեր կը ճանչնայինք զիրար. չեմ զիտեր: Գիտեմ թէ ինքզինքս ճանչցած օրէս ի վեր զիշեր ցորեկ միասին եղած էինք:

Սիրանուշ, իր ծնողքին մէկհատիկը, չորս հինգ տարու պզտիկ էր ինչ: Ու մանկութեանս վերջին տարիները իր պաշտելի աղջնակի ներկայութեան պայծառութիւնովը լեցնելէ ետք, արդէն շատոնց խելահաս ու շնորհալի ընկերուհի մըն էր ինծի, երբ իրեն մնասբարովս կ'ըսէի, ճակատէն համբուրելով յուզուած ու երկիւղածօրէն:

Ու հիմա սահմակած կը նայէի իրեն:

Գեթի զեղին ու ընկճուած, իր խորունկ ու խոշոր աչքերուն մէջ՝ խեղճ հալածուած անասունի մը նայուածքին աղաչաւոր զահանգանքը ունէր ան: Անսահման թաղծութիւն մը փորագրուած էր իր դէմքին տեղունութեանը մէջ: Անոր նիհար թեւերը, անոր աղօթքի ու անձկութեան եղերական թեւերը, կարծես թէ ա'լ յոգնած ըլլային՝ գերագոյն գալարութեան մէջ՝ կոյր ու անողոք ճակատագիրը պաղատելէ, ու անհունօրէն կ'երկնային իր հիւժուած մարմինը ծածկող շրջագծետի սուզին վրայ:

Սիրանուշի զեանահար տեսքը ու մօրս այլայլած զիրքը զիս տակնուվրայ կ'ընէին: Տարտամօրէն կը բուռնէի կոր շարաշուք աղէտքը որ զարկած ըլլալու էր իմ տարաբաղդ ընկերուհիս, ու արդէն տաքնապահար սիրտս եղբայրօրէն անոր ցախին հանդիպելու կը շտապէր անհամբեր:

Երբ ծեր կնիկը մեկնեցաւ, մայրս պահ մը Սիրանուշին քով մնաց, լուռ ու համակուած, խանդաղատագին նայուածքներ հանգչեցնելով անոր վրայ, ու սեւ աղուոր մազերուն հիւսքերը գզուելով: Յետոյ զիս անկին մը քա...

չեց ու քանի մը հծծուած բառերով տեղեակ ըրաւ ահարկու տոճմին որ Սիրանուշը այդ դժխեմ ու խորտակուած վիճակին հասուցեր էր:

Տառապանքի երկրին հեռունքէն կուգար կոր ու արիւնտա Մղձաւանջին ճամբանքէն քաշկուտուեր էր ան: Իր ճերմակ հոգին, իր անմեղութեան լուսաւոր հոգին բախեր էր Ոճիւրին ու Անօրէնութեան տմոյն պատերուն, ու Չարին բոլոր զօրութիւնները մոլեգններ էին հոսելու անոր կուտական հոգիին անապակ բուրաստանին մէջ գարշումն ու արհաւիրքը ժանտ ու չկասկածուած բաներուն...:



Կարմիր Տարիին ոգոստոսի վերջերն էր: Քանի մը օրէ ի վեր դժնեայ ու պակուցիչ լուրեր բերնէ բերան ման կուգային քաղաքին մէջ: Խորհրդապահ ծածուկ անկիւններ, ցած ու խեղդուած ձայներով, Հայերուն դէմ սողորուող կոտորածի ու աւարի խօսքեր կ'ընէին: Ամէն տեղ, անորոշ բայց անգոհական զգայութիւնը ունէին կարծես Աղէտքին որ կը սաւառնէր հորիզոնին վերև ե ուր կը սպառնար մօտենալ եւ տապաստ իյնալ քաղաքին վրայ:

Սիրանուշ չէր կասկածեր այս բոլորը: Եւ սակայն, չեմ գիտեր ի՞նչ անսովոր ու ճշող բան մը կը զգար մըթնօրերին մէջ որ տաժանելի կ'ընէր իրեն առտնին խաղաղ ու միօրինակ կեանքը: Անիկա նշմարեր էր իրեններուն գէմքին վրայ յեղակարծ գունաթափումներ, նայուածքներուն մէջ արտակարգ սեւոտումներ ու խոռոխ վեհերոտութիւն մը անոնց հասարակ շարժումներուն մէջ: Երանք ծանր կը խօսէին ամենքը: Ա՛լ չէին խնդար բնաւ: Ու խընպտած, անշեշտ ձայներուն մէջ անստուգութեան ու վախի սարսուռ մը կը զողար: Սիրանուշ նշմարեր էր նաև իր շուրջը տենդային ու սգեսպառ փղձկուտներ ու՝ անոնց յաջորդող՝ յանկարծական, սառնեղէն լուսթիւններ ուր բոլոր իրենները կը պրկուէին, կ'անշարժանային տեսակ մը սարսուղին մտածութեամբ մէջ, որպէս թէ պատրաստուելու վրայ ըլլային անձանթ, ճակատագրային ու մահացու բաներու...:



Չարաշուք յանգուած չուշացաւ: Իրիկուն մը, խուլ, մահազուժ ձայներ, զարհուրանքի ու կոծումի ճգնաժամային ձայներ արթնցուցին Սիրանուշը իր խնկարոյր բունէն: Ընդոստ ելաւ անկողնէն ու ծածկուելով հապշտապ սենեակէն դուրս նետուեցաւ: Մայրը արդէն ելեր ու՝ ձեռքը ճրագ մը բռնած՝ անոր դրանը քով կը սպասէր հերարձակ, անձկութենէ կապարագոյն ու ամբողջ մարմնովը զողալով: Ենչասպառ ու ահաբեկ, գրկին մէջ առաւ ան իր մէկ հատիկ աղջիկը ու զայն սրտին վրայ սեղմեց խելայեղօրէն:

— Մի՛ վախնար, աղջիկս... Անո՛նք են... կուգան կոր... Աստուած կ'ողորմի քեզի... մի՛ վախնար, աղջիկս... Մահասարսուռ վայնասունը կը բարձրանար, հետըզ-

հետէ աւելի ներոյժ ու համապարփակ: Գալարատանջ մարմիններու գերագոյն տաժանքէն բրթած ահարկու ոտնումներ, օգնութեան ու պաղատանքի աղիւսար ճիշեր, աղջկան ու տղաքներու սրտաճմլիկ, յոգնատխուր հեծեծանքներ ու երկարաձգուած հոգեվարքներու անհնարին հոնդիւններ գիշերը կը լեցնէին, անոր սեւ միտերը փուշ փուշ ընելով իրենց տուայտանքի, անէացման ու կործանումի դրդումին քստմնելի ահագնութեամբ:

Ու մահասփիւռ, աւերիչ Խուժանը, Եղեանի այրահար թափորի մը պէս կը մօտենար, վիթխարի ու մոլեկան:

Սիրանուշի մայրը՝ իր աղջկան սպառնացող վտանգին սարսափովը խնթեցած՝ անոր թեկն բռնեց ու տանը վերնայարկը, զաղտուկ ու անթափանց խորշի մը մէջ տաքաւ զայն պահել:

— Հոս կեցի՛ր, աղջիկս, ըսաւ անոր, տեղէդ մի՛ շարժիր, ձայն ձուն մի՛ հաներ, մինչեւ որ ես դամ ու քեզի ասկից առնեմ:

Ու զայն անձկութեամբ ու կատաղօրէն համբուրել վերջ վար իջաւ, իր էրկանը քով: Յաւաքին մարդը, սրմբած ու գողահար, ի՞նչ ընելը չէր գիտեր ու անկիւն մը լուռ կեցեր, գետին կը նայէր խեղճուկրակ: Դեռ հազիւ քատուննոց կար. յաղթ մարմին մը ունէր ու հուժկու թեկեր որ երկու քովերէն վար կը կախուէին, անօգուտ ու աւելորդ անդամի անջլութեամբ մը:

Ճրագը մարեցին ու էրիկ կնիկ սպասեցին մութին մէջ:



Սիրանուշ իր սեւ խորշին մէջ կը սպասէր, շունչը բռնած ու աչքերը խաւարին վրայ բացած, ահուկի բանի մը սպասումին խոռոլքէն: Դուրսի վայնասունը հազիւ մինչեւ հոգ կը հասնէր:

Քանի մը անվերջ ու ծանրակիր ժամեր անցան, ու Սիրանուշ, ախանջը պատին դրած մտիկ կ'ընէր. ամբողջ մարմնովը պրկուած:

Յանկարծ տանը վարի յարկերէն բուն աղմուկ մը իմացաւ: Խորտակուող դռներու, ջարդուփշուր եղող առարկաներու, ճարճատող կարասիներու ու աճապարող բիրտ քայլերու խառնաշփոթ ու հրէշաւոր ձայներ որոնք տունը կը սասանեցնէին:

Ասիկա չէր գիտեր ո՛րչափ տեկեց: Երբ խուժուժ ձայները դադրեցան ու վայրագ ժխորը հեռացաւ տունէն, արդէն լոյրը ծագելու վրայ էր: Սիրանուշ ա՛լ չկրցաւ դիմանալ ու դուրս ելաւ իր խորշէն: Ոտքին ծայրերուն վրայ կամաց կամաց վար իջաւ սանդուղիներէն: Ապշած, զահանդած չորսդին կը նայէր հիմա: Տունին մէջ բան մը չէր մնացած: Մերկ տախտակներն ու պատերը ահաբեկիչ ամայութիւն մը հագեր էին: Դռներն ու պատուհանները հաներ տարեր էին, ու տունը բաղձաչեայ գանկի մը պարտապ նայուածները կը տնկէր ամէն կողմէն:

Սիրանուշ խելացնոր դէպի սրահը վազեց: Հաշիւ

սեմին վրայ հասած էր, երբ ծունկի ինկաւ ուժասպառ ու ջախջախուած: Անասելի, զազանային խժգժութեան զարհուրելի պատկեր մը իր վիժխարի գծնդակութիւնը կը զարնէր հող իր շլժորած նայուածքին: Տախտակամածին վրայ Սիրանուշին մայրն ու հայրը իր սրու քօլ, արիւնի լճակի մը մէջ երկնցած էին մեծ մերկ...:

Խեղճ կինը կամովին սպասեր էր այդտեղ ու էրիկն ալ ստիպեր էր իր քօլը մնալու, որպէս զի ֆիւրտերը տունին մէջ ուրիշ անձի մը ներկայութեան կասկածը չունենան, ու խողովոցումի վայրկեանին անգամ ձայնը փոքրին մէջ պահեր էր կատաղաբար՝ թունդ չհանելու համար իր աղջիկը: Հրոսակները զանոնք մորթելէ վերջ հանուցուցեր էին ու մինչեւ յետին գուպանին առեր տարեր էին:

Սիրանուշ զիւային աղաղակ մը արձակեց ու ծունկերուն վրայ՝ արիւնին մէջէն քաշկոտուելով մօրը գիակին մօտեցաւ: Դեռ տաք էր մարմինը, ու կէս մը կտրուած վիզէն զեռ ժայթքող արիւնի ցայտումը Սիրանուշի երեսնիվեր նետուելով անոր բիբերը պղտորեց:

Սիրանուշ միշտ ծունկի վրայ, աչքերը տարապայման հրայրքով մը մօրը գիակին յառած, արիւնին կարմիր խենդութիւնովը կը լեցնէր զանոնք: Ու ատեն մը մնաց այդպէս, պակուցումէն ու յուսահատութենէն քարայցած ու եղեանին հոտէն զզայտախար: Անիկա չկրցաւ լալ. արցունքին անպորող անձրևը չիջաւ անո հոգիին ամենի փոթորիկին վրայ. հազիւ քանի խեղդուկ ու պատուած հեծկտանքներ անոր կոկորդը քերթեցին: Յետոյ ծռեցաւ մօրը վրայ, իր անբիծ շրթունքները անոր արիւնստ շրթունքներուն փակցուց ու մոլեղին խանդաղատանքի վերջին համբոյրի մը մէջ զանոնք խածնէ վերջ, ոտքի ելաւ ու մահաշուք տունէն զուրս վազեց խելագար:

Ամառուան պայծառ առտու մըն էր: Լոյսով ողողուած քաղաքին մէջ ա՛լ կործանարար Ուժը դաղրեցուցած էր իր շղթայագերծ ու մահասփիւռ վազքը: Ամայի փողոցները աղէաքի վաղորդային խուլ սարսափը կը լռէին: Գիշերուան կոտորածէն ձողապրած ողորմելի ու գունաթափ էլ ակներ, ճամբաներու դարձքէն երեւան կուգային երբեմն ու հետապնդող մղջաւանջէն կարծես հալածուած՝ դէպի մօտակայ եկեղեցիները կը շտապէին հեւալով: Սիրանուշ մեքենաբար հետևեցաւ այլակերպած երիտասարդ կնկան մը որ հերարձակ կը վազէր, գիւրկին մէջ երախայ մը բռնած:

Ա՛լ լմնցած էր: Ու ամբողջ այդ գերագոյն գիշերը ո՛չ մէկ հրազենի հարուած լսուած էր քաղաքին մէջ: Ոճիբը իր ժանգոտ ու ծուռ Դանակը միայն մաքրեր էր Հայուն հոսելու պատրաստ արիւնին մէջ, ու չէր հանդիպեր բնաւ իր վատ ու զիրին ճամբուն վրայ՝ ինքնապաշտպանութեան տարտամ, հեռաւոր շարժումի մը, բոլոր այդ ողբալի ժողովուրդին կողմէ . . . :

Քանի մը օր վերջը, Սիրանուշի մնացած ծանօթներէն սրտցաւ մարդիկ անոր տխուր որբութեանը մտածելով մեզի յիշեր ու զայն մեզի զրկեր էին:

Ա՛լ մեր որբը, մեր տունին հիւանդ աղջիկն էր անիկա, ու կաթոգին աղապատանքով մը շրջապատեցինք զինքը ամէն վայրկեան: Դիւղակ ցնցումէն ի վեր որ անոր էութիւնը հիմէն խախտած, քայքայած էր, Սիրանուշ մեր քօլ կ'ապրէր գատա պարտուած ու փտաւոր կեանք մը:

Պարտէզներու ու գաշտերու վրայ նայող լուսաւէտ սենեակին մէջ զոր իրեն յատկացուցած էր մայրս, անիկա լուռ կը մնար երկար ժամեր, շուարած պիշ աչքերը պատսցնելով տարտամ անկիւններու վրայ: Մենէ մէկը միշտ իր մօտը կ'ըլլար: Բայց մեր փութկոտ խնամքներուն; մեր սիրազեղ արտորանքներուն հազիւ կը պատասխանէր ան քանի մը տօգոյն վանկերով, հազիւ երբեմն կը մտածէր ետին գառնալ, նայիլ պահ մը իր հատնումի ու սևեռման ճամբուն մէջ:

Չուարթ, խելխուլ պատմութիւններ ըրինք զինքը մտազբօսելու համար, անուշ, մոռցնող երգեր կանչեցինք իր ցաւը քնացնելու համար: Ոչինչ կրցաւ զայն սթափել իր գծնայ յափշտակութենէն, ոչինչ կրցաւ վրդովել իր կապարէ երազանքը:

Միակ ու բռնաւոր մտածում մը տիրականօրէն կը լեցնէր իր սպառող գոյութիւնը, կը լլկէր իր կիսաւեր հոգին:

Արիւնին տարամերձ ու անողոք յաճախանքն էր ասիկա:

Արիւն կը թափէր գիշերին մէջ, արիւնի տարափներ գահավիժօրէն կ'իջնային զուրսի սև միջոցին մէջ, ու արիւնով կարմրած աղջամուղջը իր նայուածքը կը կուրցնէր:

Սիրանուշ ա՛լ գրեթէ չէր քնանար: Ճակատագրական մահագոյն վարագոյրի մը պէս իր կեանքին վրայ իջնող, իր սխրալի մանկութիւնը վերջացնող գաժան գիշերէն ի վեր, անիկա չէր կրցեր գոցել իր աչքերը, վախնալով կարծես անոնց մէջ բանտել ու միշտ պահել արհաւիրքը զոր անհունօրէն տեսան անոնք:

Ո՛րքան գիշերներ հսկեցի ես ալ Սիրանուշին քօլ: Յուզումով ու երկիւղածութեամբ կը մտնայի ամէն անգամ սենեակէն ներս: Իրեն կը մօտենայի ու ճակատէն կը համբուրէի, ինչպէս կը համբուրեն խորանին վրայ զըրուած նուիրական մասունք մը: Քանի մը անիմաստ բառեր կը թօթովէի իրեն ու անկիւն մը կ'երթայի նայիլ լուռուժունջ: Անիկա երբեմն ինձի կը նայէր գերմարդկային նայուածքով մը ու տարօրինակ քաղցրութեամբ ժպիտով մը որ դալկացած սրբուհիի միստիքական շնորհք մը կը ցնէր անոր գէմքին վրայ:

Ժամերը կ'անցնէին ծանր ու յուզարկաւոր:

Երբեմն զուրսէն եկող անորոշ ձայն մը Սիրանուշը կը ցնցէր: Ոտքի կ'ելլար ան յեղակարծ ու ահուզողի կսկծալի շեշտով մը՝

— Անոնք են... կուգան կոր... փախչինք... կ'ըսէր սարսափած, ու կուգար ինձի փսրիլ աղաչաւոր ու սարսըրազին: Ան ատեն, թևերուս մէջ կ'առնէի զինքը ու ա-

պահովիչ խօսքերով կը հանդարտեցնէի, կը փարատէի իր վախը: Ու նորէն կը լռէինք միասին:

Ամէն առտու՝ մաթնուլուսուն՝ պատուհանին քով կ'երթար նստիլ եւ զլուխը ապակիին կոթնցուցած՝ արշալոյսին կը սպասէր անհամբեր: Ասիկա տարփանք մը, հրայրք մը եղած էր իրեն:

Բայց աշնան սկիզբները ա՛լ չկրցաւ անկողնէն ելլալ: Կոնակի վրայ ոգեսպառ երկնցած, ամէն վայրկեան կը վառէր, կը հատներ անիկա՝ ուխտուած ու անշէջ մոմի մը պէս: Բժիշկները ամէն յոյս կտրեցին ինձի, ու մենք՝ ճարահատած անսր կեանքը երկարելու մեր հոգեին մաքառովին մէջ՝ համակերպեցինք ա՛լ անոր խպառ մեկնումին:

* * *

Այլ գիշերը ամբողջ հսկեր էի իր սնարին քով: Արշալոյսին — սր իր կեանքին վերջալոյսն էր այս անգամ — Սիրանուշ իր հալուժած զլուխը բարձին վրայէն տաժանազինօրէն վեր առնելով՝ աչքերը պատուհանին սեւեռեց: Յետոյ ինձի դարձաւ նայեցաւ երկար, պաղատագին նայուածքով մը: Հասկցայ որ դուրսը նշուող արշալոյսը տեսնալու վայելելու իր անկարող տենչանքը կը գալարէր զինքը: Վարադոյնները մէկզի ըրի, ու անկողինը մեղմօրէն պատուհանին մօտեցուցի:

Հորիզոնին կուսութիւնը վարդագոյն արիւնի անհուն ամօթածութեամբ մը շառագունեց էր արդէն, ու հրաշքանդակ ամպեր իրենց ոսկեզօծ շղթաները կը տարածէին երկինքին միապաղաղ մաքրութեանը վրայ:

Սիրանուշ, իր կմախացած արմուկները բարձին յենած, զլուխը ձեռքերուն մէջ, անհնարին յափշտակութեան տենդալառ նայուածքով մը հորիզոնը կը լափէր:

Յանկարծ ինձի դարձաւ ու երանութեան աստուածային ժպիտով մը որ միշտ պիտի ճառագայթէ ուղեղիս մէջ, մխիթարուած կարծես բոլոր անողորմ ճակատագրականութենէն որ զինքը հալածած, ճգմած էր, ու ազատագրուած Արիւնին յամառող յաճախանքէն որ իր դիւրաբեկ ծաղիկի կեանքը խմած, ցամքեցուցած էր, անյիշաչար, զրեթէ ներող ձայնով մը մրմնջեց:

— Ո՛չ ոք ինձի չափ արշալոյս տեսաւ...

Ու Սիրանուշ աչքերը դոցեց, ա՛լ չբանալու համար զանոնք . . . :

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՊՐՕՊՍԳԱՆԴԻՍԸ

Ա

Երբ զանգակը հնչեց մեծ օրահին մէջ, Պ. Աշոտ ինքն ալ աշակերտներուն չափ ուրախ, զուրս նետուեցաւ դասարանէն և ուղղուեցաւ խօսարան կոչուած մութ ու աղտոտ սենեակը ուր՝ հանգստի պահուն՝ դասատուները կը հաւաքուէին:

Այլ օրը իր աշխարհագրութեան դասը տալու տրամադրութիւն չունէր: Զբաղկոտ, մտատանջ դէմքով եկած էր դպրոց, զրբին վրայէն մեքենաբար հարցումներ ուղղած էր աշակերտներուն և առանց մտիկ ընելու յսած էր անոնց պատասխանները: Դիտողութիւն մը, սրբազրութիւն մը չէր ըրած բնաւ. նոյնիսկ — « Լա՛ւ, տեղի նստէ » հրամայած էր աշակերտի մը՝ որ ասիական թիւրքիոյ զըլխաւոր նաւահանգիստներուն մէջ դասած էր Եանեսան:

Խօսարանին մէջ արդէն տաճկաբանը, հայերէնի եւ զրահաշիւի դասատուները կայնած կը խօսակցէին, երբ Աշոտ ներս մտաւ:

— Իրաց կացութիւնը ծանր հանգամանքներ կ'երեւի թէ սոսա՞ծ է, կ'ըսէր զրահաշիւի դասատուն՝ խորհրդաւոր կերպով մը, սկսուած խօսակցութիւնը շարունակելով:

— Պարագանքերը շատ աննպաստ են, պատասխանեց Պ. Օննիկ, հայերէնի դասատուն, և՛ հակառակ ձեր կարծիքին՝ ես սա եզրակացութեան պիտի յանդիմ որ ձեր յուսացած ելքը պիտի չունենայ և թէ ձեր լաւատես ենթադրութիւնները շատ իրականալի չեն...: Այսուհանդերձ ըսեմ որ ասիկա զուտ իմ անձնական կարծիքս է, կրնայ հակառակը պատահիլ, կրնամ սխալած ըլլալ, չեմ գիտեր:

— Բայց, եղբայր, վերջապէս սկզբունքի խնդրը կայ. ստնակոխ չեն կրնար ընել, գոչեց տաճկաբանը:

— Սկզբունքը երբեմն կրնայ ոտնակոխ ըլլալ կրք ընդդիմադրուող զօրաւոր շահեր կան մէջտեղ, կ'ըսէ Գալուր, պատասխանեց զրահաշիւի դասատուն, ծանր, հանդիսական, զրեթէ յուղարկաւորական լրջութեամբ:

— Ի՞նչ է խնդիրը, մէջ մտաւ Աշոտ, սիկարէթ մը վառելով:

— Կարծեմ Պիզմարք մը ըլլալու հարկ չկար հասկնալու համար որ այս ժամուս մեզ զբաղեցնող խնդիրը միւսի Մինասին խնդիրն է, պտտասխանեց զրահաշիւի դասատուն:

— Զգեցէ՛ք, եղբայր, այլ տեսակ պարապ բաներու վրայ վիճաբանելու ատեն է, գոչեց Աշոտ, այս կերպ փոխարինելով իր խօսակցին հեզնական ու վիրաւորիչ պատասխանը:

Մինաս դպրոցին իրազիտութեան դասատուն էր եւ վերջի եռամսեայ քննութեան ատեն զրօ մը տուած էր թաղեցի ունեւորի մը տղուն որ բնաւ չէր կրցած պա-

տասխանել իրեն ուղղուած հարցումներուն: Հարուստը որ թաղական խորհրդին մէջ բարեկամներ ունէր, պահանջած էր որ շէնք շնորք թիւ մը տան իր տղուն: Դասատուն ընդդիմացած էր, զպրոցի հոգաբարձութեան պաշտպանութեանը կոթնելով, ու ասկից ծագած էր խնդիր մը որ, ինչպէս տեսանք, այնչափ լրջօրէն կը ծեծուէր խօսարանին մէջ: Անտարակոյս Աշոտ իրաւունք չունէր այդ աստիճան թեթևօրէն դատելու իր արժանայարգ պաշտօնակիցներուն յուզած խնդիրը որուն մասին ինքն ալ ուրիշ օրեր ժամերով վիճած էր: Բայց այդ օրը տեսանք որ Աշոտ սովորական մարդը չէր. խելքն ու միտքը ուրիշ տեղ կը սաւառնէին, ու իր այս տրամադրութեան մէջ «Պիղմարք» ալ վրայ գալով, մտազբաղութիւնը զրգոութեան փոխուած էր: Գրահաշիւի դասատուն սակայն սուշազրութեան չառաւ, կամ թերևս չուզեց աննել, Աշոտի անսովոր կերպարանքը, եւ տեղի չտուաւ զիրաւ:

— Պարոն, ըսաւ աշակերտի մը խօսելու ձևով, Մէթընիք ըսած է որ «Պատիկ խնդիր չի կայ», և ըստ իս այս խնդիրը այնչափ կարևոր է որչափ Անգլիոյ Բարլամէնթին մէջ յուզուած խնդիրները: Սա եւս ըսեմ որ խնդրին մէջ միւսիւ Մինասին բռնած զիրքը արժանի է կատարի մը:

Կատարն երկօր թէ կրտսեր, հարցուց Աշոտ խեղկատակ ձևով մը որ երբեք հաշտ չէր այն հանդիսաւորութեան, որով իր ընդդիմախօսը կ'ըմբռնէր վիճաբանութիւնը:

— Եթէ խնդիրը անձնակ սնի պիտի տանինք, լաւ է որ լռենք, գոչեց գրահաշիւի դասատուն այլայլած. աւտանկ թեթևօրէն խօսելով ո՛չ միայն կը նախատէր միւսիւ Մինասը որ՝ կը կրկնեմ՝ Կատարն մը արժանի կերպով կը վարուի կոր խնդրին սկիզբէն ի վեր, այլ նաև կը նախատէր Կատարն. բան մը որ չեմ կարծեր թէ ներքի ըլլայ նոյնիսկ Սկիպիտի մը համար:

— Մենք միշտ այսպէս ենք արդէն, վճռեց հայկաբանը, խորհրդարանական վիճաբանութիւն ընել չենք զիտեր, սկզբունքը նկատողութեան չենք աններ, նիւթէն կը շեղինք, եւ ճիշդ ասոր համար է էր Թիւրի պէս, Կլատտիոնի պէս, Կամպէլթճայի պէս մարդիկ մեր մէջ առաջ չեն ի գար:

— Միջավայրն ալ պէտք է նկատողութեան աններ, ըսաւ Թիւրքերէնի դասատուն իր չէզոքութենէն անորոշապէս դուրս ելլելով:

Վէճը անշուշտ աւելի պիտի բորբոքէր ու երկարէր եթէ՝ բարեբախտաբար՝ գաղաթի տասը վայրկեանը լրացած չըլլար: Զանգակը հնչեց և դասատուները ուղղուեցան իրենց դասարանները:

— Պարապ մարդիկ, կը մտածէր Աշոտ դասարան մանկելով, ոչինչ խնդիրներով կը զբաղին, մինչդեռ անդին այնչափ կարեւոր բաներ կան: Ինչ թմրած, անբանացած ուղեղներ են ասոնք... Կովկասցիները իրաւունք ունին, փճացած մարդիկ ենք մենք:

Դասի միջոցին Աշոտ նորէն ինկաւ իր մտազբաղ վի-

ճակին մէջ. շարունակեց մեքենական հարցումները եւ անուշադիր լսեց տրուած պատասխանները: Ատեն աւան ժամացոյցը կը նայէր, տենդոտ, անհամբեր շարժումներով: Պահ մը սիկարէթ մը հանեց ու վառեց: Աշակերտները իրարու երես նայեցան գայթակղած զարմանքով եւ մէջերնէն մին անպատկառօրէն ըսաւ.

— Միւսիւ, դասարանին մէջ ծխելը արգիւրեալ է:

Տղուն դիտողութիւնը ընդհանուր ծիծաղ մը առաջ բերաւ և Աշոտ սիկարէթը նետեց ամօթախառն բարկութեամբ մը:

— Վնաս չունի, միւսիւ, հաս մը ծխեցէք, ըսաւ ուրիշ աւայ մը, ներողամիտ, հայրական շեշտով մը:

— Լո՛ւ, անպիտան:

Վերջապէս ժամը լրացաւ. երեկոյեան արձակուրդի փրկարար զանգակը հնչեց ու Աշոտ անձրեւնոցը առած փողոց ելաւ:

Երեսուն տարեկան, նիհար, միջահասակ, թուխ երիտասարդ մըն էր Աշոտ Սեւան, մասնագէտ աշխարհագրութեան եւ պատմութեան: Ուսուցչի ասպարէզը սկսած էր գաւառային դպրոցի մը մէջ՝ ուր պաշտօնավարած էր երեք տարի, ու յետոյ վերադարձած Պոլիս: Իր մտատիպարը եղած էր վաճառականի մը քով զրազրութեան պաշտօն մը, եւ զասատուութիւնը նկատած էր իբր առժամեայ գործ մը, տեսակ մը քաւարան, ուրիշ պիտի անցնէր հասնելու համար երանելիներու դասը: Սակայն տարիները կը բոլորուէին ու ինքը կը յաւերժանար «առժամեայ» ասպարէզին մէջ: Հիմակ ա՛լ գրեթէ հըրժարած իր ոտիկ երազէն, խարսխած էր դասատուութեան մէջ եւ գո՛հ էր իր վիճակէն, գոնէ նիւթականի մասին: Դասերը հետզհետէ կ'աւելնային և կարևոր զգրոցներու մէջ մուտք գտնել կը սկսէր: Սակայն միշտ բարձրամիտ արհամարհանք մը պահած էր իր պաշտօնին դէմ, ու անձնագոհութիւն մը, շնորհք մը ընելու պէս կը վարէր զայն:

— Այս ապերախտ ասպարէզին մէջ կարողութիւնները անօգուտ կը մաշին կոր, կը մտածէր ինքնիրեն և նոյնիսկ կը կրկնէր երբեմն իր մտերիներուն:

Ստուգապէս կը հաւատար թէ թաքուն, հրաշալի կարողութիւններ ունէր, որոնք գործունէութեան միջոցներէ զօրկ, իր ներսիդին երկար ատեն մնալով՝ կը սպանանային իրենց կենսական ոյժը կորսնցնելու և օր մը բոլորովին փճանալու:

Իր այս տրամադրութեան մէջ կը տուայտէր երբ ԳՅԻ սկիզբները յանկարծ գաղափարը ունեցաւ յեղափոխական գործին մասնակցելու. «Ատոր մէջ գոնէ գործածեմ կարողութիւններու» մտածեց: Անմիջապէս զիմեց պաշտօնակից բարեկամի մը որ յայտնի գործիչ մըն էր: Բարեկամը որ խանդավառ, գործունեայ, աղմկարար երիտասարդ մըն էր, Կոստակ Բագրատեան անուն, թեւաբաց ընդունեց զինքը:

— Ապրի՛ս, գոչեց Աշոտի ճակատը համարելով, հի՛մա մարդ եղար. տե՛ս քեզի հետ ինչե՛ր պիտի ընենք:

Երեք ամիսէն վստահ եղիր որ խմբապետի վկայագիրդ բերել պիտի տամ. առ այժմ սա թերթերը կարգա՛:

Աշոտ թէն շլացած իր առջեւ պարզուած հեռապատ կերէն, սակայն եռամսեայ սպասողական վիճակը քիչ մը երկար դատեց եւ հարցուց իր բարեկամին.

— Է՛, մինչև այն ատեն՝ բան մը պիտի չընե՞մ:

— Ի՛նչպէս չէ. նախ քսակիդ համեմատ ամսական բան մը պիտի վճարես...

— Ատ դիւրին է:

— Յետոյ, պիտի ջանաս որ ուրիշներէն ալ նուէրներ հաւաքես...

— Գործելո՛ւ, գործելո՛ւ դաշտ, եղբայ՛ր:

— Բայց կամաց կամաց. դեռ նոր պիտի ճանչնանք քեզի, քննենք ու փորձենք կարողութիւնդ: Մեր կուսակցութեան անդամները բնութեան կը նմանին, ոստում չեն ընեն:

Աշոտ հակառակ իր ջանքերուն ստիպուեցաւ ընդունիլ նորավարժի վիճակը որուն ենթարկած էր զինքը Կոնսակ. Այսուհանդերձ այդ կրաւորական ու անզորօճ յեղափոխութիւնն իսկ բաւական եղած էր կերպարանափոխելու իր հոգեկան վիճակը: Սահմանափակ, տկար միջոցներով կղզիացած սոսկական մարդ մը ըլլալէ դարձեր էր: Կը զգար որ մեծ ու զօրաւոր ամբողջութեան մը մասը կը կազմէր հիմակ, ու ատիկա անուահաման, աննահանջելի ուժի մը զգացումը կուտար իրեն: Այդ հաւաքական գործութիւնը, մանաւանդ իր թաքուն ու խորհրդաւոր ձևին տակ, ա՛լ աւելի խոշոր համեմատութիւններ կ'առնէր իր աչքին: Փողոցը քալած ատեն իրեն այնպէս կը թուէր թէ ամբողջ բանակ մը կ'ուզար ետեւէն. դաշոյններով, ատրճանակներով, ուսմբերով զինուած մարդիկ՝ որոնք առասպելական քիւլահներու տակ անտեսանելի եղած՝ կը հետեւէին իրեն: Ա՛լ ներողամիտ արհամարհանքով մը կը նայէր իր բնական թաղին ունեւոր վաճառականներուն վրայ որոնց քով զրազրութեան պաշտօն մը իր անիրականելի անուրջը եղած էր մինչեւ այն ատեն: Չէ՛ մի որ ամենուն ալ կեանքը իր ձեռքին մէջն էր. կ'ապրէին՝ որովհետեւ ինք անպատեհութիւն մը չէր տեսնար ատոր մէջ: Յետոյ, վերջապէս պէտք էր որ այդ փճացած, անբանաւորարածները բանի մը ծառայէին: Թող տալու էր իրենց որ ստակ շահին՝ քանզի դրամ պէտք էր սուրբ գործին համար. — «Մեր դրամապահներն են անոնք» կը կրկնէր միշտ և այնքան հաւատքով որ իրիկուն մը երբ մօրմէն ու քրոջմէն իմացաւ թէ Մերկեր աղան, թաղին մեծագոյն հարուստը, խոշոր տուն մը կ'առուցանելու միտք ունի եղեր, պարզապէս բարկացաւ ու հետեւեալ օրն իսկ Կոնսակին հաղորդեց լուրը, աւելցնելով. — «Նամակ մը գրելու եւ արգիլելու է. ապո՛ւշ արարած, հիմա տուն շինելու համար ստակ վատնելու ատեն է:» Ամէն դէպք, ամէն խնդիր, յեղափոխութենէն զատ, ոչնչութիւն էր իրեն համար: Վա՛յ եթէ մէկը սխալմամբ սանկ հարցում մը ընէր իրեն. — «Պարոն Աշոտ, կարդացի՞ր Ուսումնական խորհրդին որոշումները:»

— Ոչինչ բաներով զբաղելու ատեն չունիմ, կը պոռթկար նորընծայ յեղափոխականը, Ուսումնական խորհրդին որոշումներէն շատ աւելի կարևոր խնդիրներ կան այս միջոցիս: Հերիք այդ տղայական բաներով ատեն անցուցինք, ա՛լ մարդ ըլլանք քիչ մը... տասնըննեորդ գարուն մէջ կ'ապրինք կ'որ:

Իր ինքնավստահ, անհաշտ, գրեթէ սպառնական ձեւերը, որոնց վարժուած չէին իր թաղեցիները, անբացատրելի ու տարօրինակ երեւցան շատերուն:

— Ի՛նչ ունի աս տղան, փոխուեցաւ բոլորովին, առջի մարդը չէ բնաւ, կ'ըսէին իրարու:

Յետոյ, կամաց կամաց, պատճառը կուհեցին: Ճըշմարտութեան սիրոյն համար պէտք է ըսենք որ դուշակութիւնը նախ և առաջ սափրիչ Յովսէփ աղան ըրաւ, կիրակի առտու մը, Աշոտի մազն ու մօրուքը կտրելէ վերջը:

— Օննիկ աղա, գոչեց սափրիչը, իր զիտէն քառորդ մը ետքը, խանութին զիմացը գանուող ֆէսճիիին նշան ընելով. հո՛ս եկուր, բան մը պիտի ըսեմ:

Ընկերը, հետաքրքիր, վազեց անմիջապէս:

Յովսէփ շրթունքը հպեցուց Օննիկի ականջին, ձախ ձեռքին ափը դէպի դուրս դարձնելով վաագուրեց ականջի ու շրթունքի զուգաւորումը և մրմնջեց.

— Ծօ՛, միւսիւ Աշոտն ալ ի նոցանէ՛ է եղեր:

Օննիկ սահմոկեցաւ: Եւ սակայն չուզեց այդ կարևոր յայտնութեան ամբողջ փառքը ձգել սափրիչին ու անմիջապէս զսպելով իր յուզումը պատասխանեց.

— Կասկածած կի արդէն, բայց մէկու մը չըսի... ի՛նք ըսաւ քեզի:

— Տղա՛յ ես, ինք ատանկ բան կ'ըսէ՛:

— Հապա՞...

— Քիչ մը տոաջ խանութի եկաւ մագը կտրել տալու, գաւազանը դրաւ անկիւնը նստեցաւ. աչքիս ծայրովը նայեցայ որ կեռասի փայտէ, կոթը զարձած գաւազան մըն է. անմիջապէս հասկցայ խնդիրը: Յետոյ, մօրուքը կըտրած ատենն երբոր «սրածայր ըրէ՛» ըսաւ, ա՛լ բոլորովին համոզուեցայ. — «Վա՛յ միւսի, հիմա սրածայր թող կուտայ կ'որ մօրուքնիդ» հարցուցի անտարբեր կերպով: Եւ փոթեցաւ, կարմրեցաւ ու պատասխանեց. — «Այո՛, հիմա մօտան անանկ է եղեր»:

Գողտնիքը Յովսէփին ու Օննիկին քով շմեաց երկար ատեն: Երիտասարդ գողցաւ զայն ֆէսճիէն ու գողցուց մխտարին՝ որ ժամկոչին հաղորդեց անտեսին ներկայութեանը, որուն քով ծածուկ լուր մը իր կուսութիւնը կը կորսնցնէր, ժամ մը շանցած, զպրապետին կամ աւագներեցին ականջներուն մէջ:

Հիմա թաղին մէջ ուրիշ աչքով մը նայեցան իրեն:

Կարևոր մէկու մը, անձնաւորութեան մը դիրքը ըստացաւ և ամենքը բռնի ականածանքով ու յարգանքով սկսան վարուիլ հետը: Մենք աղաներն անգամ հարկ կը զգային իրենց կողմը ունենալ զայն կամ մանաւանդ իրենց դէմ չունենալ: Աշոտ շուտով նշմարեց իր առաջ բերած

տպարութիւնը և աւելի պահանջկոտ, աւելի կտրուկ, աւելի անպատկառ զարձաւ: Սրճարանը կամ սափրիչին խանութը թաղային հարցերու կամ զէպքերու մասին իր յայտնած զազափարներն ու փափաքները, պատգամներու փոխուած, կը զարնուէին թաղականներու ականջի թմբուկներուն:

—Պէտք չէ, էֆէնտիմ, կրօնագիտութիւն պէտք չէ զպրոցին մէջ, իրազիտութեան ոյժ տալու է:

Հետեւեալ շաբաթ քարոզիչ վարդապետը որ միանգամայն զպրոցին կրօնագիտութեան ուսուցիչն էր, «անձնական տկարութեան» պատճառաւ առժամեայ կերպով դասերը կը դադրեցնէր:

—Կը վայլէ՞ Բարսեղ աղային կնոջը ատանկ ազամանդներով զարդարուած եկեղեցի գալը, մանաւանդազգին այս ճգնաժամին մէջ. այդ մարդիկը բնաւ զգացում չունին:

Ու խեղճ կինը կը ստիպուէր ուրիշ վայրերու մէջ ցուցադրել իր թանկագին քարերը:

Միայն իր թաղին մէջը չէր սր Աշոտի ազդեցութիւնը օրէ օր կը մեծնար. միւս կողմէ, կուսակցութեան մէջ, իր սկսնակի աննշան շրջանէն անցած, կը սկսէր գործօն գերմը կատարել: Քանի մը ամսուան մէջ յաջողած էր գնահատելի ծառայութիւններ մատուցանել: Նախ՝ բաւական զբաւ հաւաքած էր, յետոյ պղտիկ խումբ մը կազմած իր քերթովն, զպրոցի կառավարչէն, խանութպանէ մը, անգործ երիտասարդէ մը և նոր շրջանաւարտ պատանիէ մը որ վարչութեան մը մէջ փոքրիկ պաշտօն մը ունէր: Խանդավառ, եռանդուն, անձնուէր պղտիկ խումբ մը, գործելու, բան մը ընելու փափաքով հրատաճոր: Աշոտ պետն ու վարիչն էր այդ խումբին սր պաշտօնապէս վաւերացած էր և «Առիւծ թաղի Պատուհաս խումբը» անունով մկրտուած: Սպասելով մեծամեծ գործերու, առ այժմ նորընծայ յեղափոխականներուն գործունէութեան դաշար կը սահմանափակուէր շաբաթական վճարումով, արգիլեալ թերթերու ընթերցումով եւ ապագայ Հայաստանի վարչական դրութեան մասին վիճաբանութիւններով: Բնականաբար խումբը միմիայն Աշոտի միջոցաւ յարաբերութեան մէջ էր կուսակցութեան հետ, որուն Աշոտ կապուած էր կոնսակի միջոցաւ:

Աշոտ վեց ամիսէ ի վեր այսպէս կը մարդուէր յեղափոխական ասպարէզին մէջ, երբ յանկարծ օր մը կոնսակ շուարած գէմքով եկաւ զինքը դտաւ:

—Վտանգուած եմ, իս կը փնտռեն կոր, հիմա պիտի փախչիմ Պոլսէն, գոչեց:

Յետոյ Աշոտը անկին մը տանելով ըսաւ թէ կեցրօնական կոմիտէն որուն անդամն էր ինք, Աշոտը ընտրած է իրեն տեղ:

Ու անմիջապէս իր բարեկամին թեւը մտնելով տարաւ ներկայացուց կոմիտէին միւս անդամներուն: Աշոտ՝ յուզուած՝ իր երախտագիտութիւնը յայտնեց իրեն եզած այդ բարձր ու անակնկալ պատիւին համար:

Կեղերօնական կոմիտէի անդամ վեց ամսուան մէջ:

ահա՛ շատ գեղեցիկ երազ մը զոր Աշոտ հակառակ իր յաւակնութեան չէր համարձակած ընել:

Կոնսակ գացած էր Եւրոպա ու հիմակ ամիսէ մը ի վեր Աշոտն էր օր անոր տեղը կը բռնէր: Մեր պատմութիւնը սկսած միջոցին Աշոտ կոմիտէի ժողովէն կուգար, և տեսանք որ տարօրինակ կերպով յուզուած ու մտազբաղ էր: Հետեւինք իրեն վարժարանէն դուրս:

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կ. Պոլսէն մարտ 22 թուականով հետեւեալը կը հեռագրուի անգլիական մամուլին.

«Հայոց Տէր Օրմանսան պատրիարքը անցեալ հոկտեմբեր 6ին պարտաւորուեցաւ իր հրաժարականը յանձնել դատական եւ կրօնական գործոց նախարարին, վասն զի անգործադրելի կը մնային այն խոստումները զոր սուրբութեանը տուած էր Պատրիարքին ինդրանքներուն, Հայոց վիճակին բարւոյցմանը համար: Սակայն այն նորանոր հաւատարմութիւններուն վրայ թէ այդ խոստումները շուտով պիտի գործադրուին, Տէր Օրմանսան հաճեցաւ հտ առնել հրաժարականը եւ մնալ պաշտօնին զուխը: Բայց մինչև այսօր բան մը չեղաւ, եւ Դուռը ինչ սր կարելի է կ'ընէ հետզհետէ Պատրիարքարանը իր առանձնաշնորհուիներէն կապտելու համար: Հետեւաբար վեց ամսուան մէջ երկրորդ անգամն ըլլալով պատրիարքը կը պարտաւորուի հետանալ իր պաշտօնէն, եւ երկ կառավարութեան զրկեց իր հրաժարականը: Պատճառներն են՝ այն խիստ միջոցները զոր օստիկանութիւնը կը գործադրէ Պոլիս գալ փափոքից հայ ճամբորդներու, վաճառականներու, ուսանողներու դէմ. նաև՝ գաւառական իշխանութեանց մերտուք անցագիր տալու անոնց որոնք առեւտուրի կամ անձնական գործի պատճառաւ կ'ուզեն երկրին ներսերը ճամբորդել կամ Պոլիս գալ, թէև իրենց անվնաս բնաւորութիւնը և բարի վարքը երաշխաւոր վկայութիւններ ալ տուած ըլլան:

«Այժմ սակայն պատրիարքին զլիսաւոր գունդատնեքէն մին կը վերաբերի Սիսի կաթողիկոսական ընտրութեան: Հակառակ կայսերական իրատէին սր կը հրամայէր այս գործողութեան մէջ անանգութիւնները յարգել, հակառակ պատրիարքական պատուիրակին ընտրութեանց նախագահելու և զանոնք ուղղելու համար ունեցած իրաւունքին, թիւրք կառավարութիւնը Ատանայի՝ ուր ընտրութիւնը տեղի պիտի ունենայ՝ վալիին միջոցաւ Սիս մշտամնայ տեղապահ կիրակոս եպիսկոպոսին հրահանգ զրկած է ընտրողները գումարել և թեկնածուներու ընտրութեանը հսկել, առանց կարեւորութիւն ընձայելու պատրիարքական ներկայացուցիչ Տ. Սահակ Ե.

պիսկոպոսին, որ պարզապէս ներկայ պիտի գտնուի ընտ-
րութեանց առանց ո՛ր եւ է կերպով միջամտելու ընտրողա-
կան գործողութեանց: Այս հրահանգը ամենածանր ա-
պօրինութիւն մըն է ընդդէմ հնաւանդ օրէնքներու եւ ե-
կեղեցական կանոններու որոնցմով Սիսի Աթոռը բացար-
ձակօրէն է. Պոլսոյ պատրիարքին իրաւասութեանը տակ
կը գտնուի:

«Պատրիարքը իր անձնական բնակարանը քաշուեցաւ,
և վաղը Ազգային Խառն Ժողովին պիտի ներկայացնէ իր
հրաժարականը, միասին ծանուցանելով իր այս որոշման
պատճառները:»

* * *

Հոկտեմբերին երբ Օրմանեան պատրիարքը հանդի-
սաւորապէս ետ առաւ իր հրաժարականը որուն վրայ շատ
պնդելու հաստատամտութիւնը ունեցած էր, հակառակ
սուլթանին ստիպմանը, մեզի ներքի էր ենթադրել թէ այդ-
պիսի ծանրակշիռ որոշում մը կուտար լուրջ երաշխաւո-
րութիւններ ստանալէ յետոյ միայն. հետեւաբար խոհեմու-
թիւն համարեցինք սպասողական դիրք բռնել, եւ մեր
զծած ուղղութեանը հետեւելու հրաւերը կարգաւ արտա-
սահմանի Հայոց: Քաղաքական խնդիրներու մէջ անհամ-
բերութիւնը ժողովրդի մը էն իմաստուն խորհրդականը
չէ: Բայց ահա այդ օրէն ի վեր վեց ամիս բողոքեցաւ.
այդ ժամանակամիջոցին ո՛չ միայն բան մը չպակեցցաւ
Հայաստանի տառապանքներէն, այլ եւ նորանոր կոտո-
րածներու և աւերումներու գուժերը անգամ մը եւս սղաւ-
րեցին: Հայ սրտերը: Ակներե Էր թէ Օրմանեան պատրի-
արքը նորէն խաբեբայութեան մը զոհ գացած էր: Ազգա-
յին համբերութեան չափը կը լրանար, ի տես պատրիար-
քին անտարբերութեանը, երբ հրաժարականին լուրը ա-
տենին կը հասնի: Հիմակ ազգը պատրիարքէն հրա-
ժարական պահանջելու հարկ չի տեսներ. խնդիրը ա-
պապային վրայ է: Օրմանեան պատրիարք կրկին իր ա-
թոռը պիտի վերադառնայ քանի մը ստապատի խոստում-
ներէ շրջած: Հաւանական է, զժբաղդաբար: Սակայն
այս նոր սխալումին համար այլ եւս ազգին համբերու-
թեանը վրայ թո՛ղ յուսադիր չմնայ: Իրեն պիտի չներ-
ուի անգամ մը եւս յայտարարել թէ «Ի՞նչ ընեմ, զիս խա-
բեցին»: Խարուած բլլալու արդարացումը եւ ո՛չ իսկ ըն-
դունելի է Աստուծոյ առջև: Ո՛չ Ազգային ներուցաւ իր
կնշմէն հրապուրուած խաբուած բլլալը, եւ ո՛չ ալ Ե-
ւային՝ որ օձին թակարդն էր ինկած: Ու խեղճերուն
առաջին յանցանքն էր, և զեռ փորձառութիւն չունէին:
Ազգին գերազոյն վարիչը որ չորս տարուան պաշտօնա-
վարութեամբ փորձառութեան առատ պաշար մը ունի,
երբ տարին քանի մը անգամ կը խաբուի, կա՛մ սեղսա-
կից մըն է ազգին թշնամիներուն, կա՛մ գերազանց ա-
պուշ մը. երկու պարագային մէջ ալ անհնարին է թող-
լատրել իրեն վարել ազգին բազը:

Պերլինի վեհաժողովէն ի վեր Հայոց Պատրիարքնե-
րուն պարտականութեանց սահմանները այլ ևս նոյնը չեն

ինչ որ 1878էն առաջ: Հայ ազգը կը ձգտի որոշ նպատա-
կի մը, — Հայաստանի հիմնական բարեկարգութեանց.
Պատրիարքները, Հայոց ազգին օրինական ներկայացուց-
չի հանգամանքովը զոր կը վայելեն, պարտաւոր են իրենց
բարձր հեղինակութիւնը ծառայեցնել այդ նպատակին ի-
րագործմանը: Օրմանեան պատրիարք այժմ իր Խրիմեան,
Ներսէս, Իզմիրլեան նախորդներէն աւելի նպաստաւոր
պայմաններու մէջ կը գտնուի բարձրաձայն խօսելու հա-
մար հայկական վեց նահանգներու բարեկարգութեանց
պահանջումին մէջ: Փորձառութիւնը ցոյց տուաւ թէ Հա-
յաստանի գծնդակ կացութիւնը ծանրապէս վտանգած է
օսմանեան կայսրութեան գոյութիւնը: Ակներե կը անս-
նուի թէ Ռուսիա ընդդէմ Թիւրքիոյ մահացու հարուածը
Հայաստանէն կը պատրաստէ, իրեն յենարան ունենալով
արիւնջուայ ժողովուրդ մը: Հայոց պատրիարքը երկրին
իշխանութեան աչքերուն առջև ճշմարտութիւնը յստակօ-
րէն պարզելով է սր պիտի հաստատէ Ազգին եւ Տէրու-
թեան համարայն հաւատարմութիւնը զոր տաճարին մէջ
ուխտած է: Անհաւատարմութիւնը խաբեբայութեան մէջ է:

Բեղրպուրկի կառավարութիւնը իր ծրագիրներուն յա-
ջողութեանը զեռ կատարեալ երաշխաւորութիւն չի համա-
րիր Թիւրքիոյ այն վտանգաւոր կացութիւնը որու մասին
ընդարձակօրէն կը խօսինք մեր քաղաքական բաժնին մէջ:

Ապագային համար ապահովութիւններ կը փնտռէ
յատկապէս Հայաստանէն ուր միշտ կը գործէ նորանոր
միջոցներով, սրոնց գլխաւորներէն մէկն է հիմա Հայոց
դաւանափոխութիւնը: Կ. Պոլսոյ թերթերը կը հաղորդեն
թէ օրթոտոքսութեան կը յարին ուսական սահմանազը-
խին մօտ գտնուող հայկական գեղերը որպիսիք են
Չիթոզ, Հինձք, Չիֆթլիք, Արշունի եւ Կէլ:

Այս խնդիրներուն վրայ եւրոպական մամուլն ալ մաս-
նաւոր տեղեկութիւններ կը հաղորդէ: Անգլիական թեր-
թերը կը գրեն. «Էրզրումի ոռու հիւպատոսին հովանա-
ւորութեամբը, բազմաշան աշխատութիւն կը կատարուի՝
Լուսաւորչական Հայերը դրամով Օրթոտոքսութեան դար-
ձնելու: Բազմաթիւ Հայեր արդէն կրօնափոխ եղած են:

Այս շարժումը մեծ անձկութիւն կը պատճառէ տեղա-
կան իշխանութեանց և Հայոց Պատրիարքարանին, որ ա-
ռաջնորդներուն եւ քահանաներուն հեռագրով հրահանգ
դրկեց յարգորել Հայերը հաւատարիմ մնալ իրենց Եկե-
ղեցիին:»

Վիեննայի Բոլիթիշէ Քոնսերւնտենց թերթը, որ
Աւստրիոյ արտաքին գործոց նախարարութեան բերանն
է, կ'ըսէ. «Դուրը Էրզրումէն ստացաւ պաշտօնական
տեղեկութիւններ որոնք ցոյց կուտան Ռուսիոյ քաղաքա-
կանութեան հիմնովին փոփոխութիւնը Թիւրքիայէն զաղ-
թող Հայոց նկատմամբ: Ոչ միայն ասոնց վերադարձին
այլ ևս ստիպողականութիւն չի տրուիր կողմաս, այլ և գոր-
ծօն աշխատութիւններ կը կատարուին բոլոր Հայերը յոյն
օրթոտոքս դաւանանքին դարձնելու համար, իբր միջոց
մը ոռու և հայ տարբերուն ի մի ձուլման: Էրզրումի
կուսակալ Բէուֆ փաշային տեղեկագիրը որ մանրամասն

տեղեկութիւններ կը պարունակէ, Դրան և սուլթանին ամենալուրջ ուշադրութիւնը դրանց. Հայոց պատրիարքէն ստիպողաբար խնդրուեցաւ հեռագրով յորդորել Էրզրումի եկեղեցականութիւնը իրենց՝ ձեռքէն եկած ամէն ջանք ի դորձ գնել ուսական տարածումին առջեւը առնելու համար:»

Այս տեղեկութեանց առթիւ անդլիական թերթերը կը գրեն. «Տարակոյս չի կայ թէ այս տեղեկութիւնը ըստոյզ է: Ասիկա ցոյց կուտայ Հայոց նկատմամբ ուսական քաղաքականութեան հիմնական փոփոխութիւնը, և սերտ առնչութիւն ունի թրքական Հայաստանի երկաթուղիներու խնդրին համար ուս մամուլին մղած պայքարին հետ: Հայոց մէջ ուսերը երկու միջոցաւ կրնան գործել, ու երկուքն ալ իրարու ետեւէ փորձեցին: Առաջին միջոցն էր՝ թիւրքիոյ Հայերը ձեռքի տակ ընդլուծումի գրգռել, և ուսահայոց օգնութեամբ Հայաստանի տիրել, առանց պատերազմի կամ ո՛ր եւ է զոհողութեան: Բայց կոտորածներն ու ֆիւրտերէն սուլթանին տրուած աշակցութիւնը անյաշոգութեան դատապարտեցին այս ծրարագիրը: Երկրորդ միջոցն էր ուսացնել բոլոր Հայերը, ու դաւանափոխութիւնը առաջին քայլն է դէպի այս նպատակին իրականացումը:»

Սակայն Բեղրպուրիի կառավարութիւնը Հայաստանով պիտի չբաւականանայ, Կիլիկիան ալ իր յատակագծին մէջ է, և արդէն հոն ալ գործելու կը հետամտի: Ինչպէս որ Սուրիա ձեռք կ'առնէ յոյն եկեղեցականները, նրմանապէս հիմակ ալ կ'ուզէ Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութիւնը իրեն գործիք ընել: Վիեննայէն այս առթիւ անգլիական թերթերուն հետեւալը կը հեռագրեն. «Սիսի կաթողիկոսին՝ ընտրութեան խնդիրը նորէն դժուարութիւններ կը յարուցանէ: Տէր Օրմանեան սպառնացաւ հրամարել նթէ Սինօզին ընտրողական իրաւունքները ջնջուին կայսերական գոմիւսներուն միջոցաւ: Թէև այս վէճը առ երևոյթս պարզապէս կրօնական է, բայց իրապէս մին է այն բազմաթիւ մեքենայութիւններէն որոնցմով Ռուսիա կը ջանայ իր ընտրելին յաջողցնել, ընդդէմ հայ ընտրողներուն:»

Թիւրքիոյ իշխանութիւնը սովոր չէ հեռատես ըլլալ. անխուսափելի վերահաս վտանգը միայն թիչ մը կը խելարերէ զինքը. և հիմա ահագնապէս սպառնացող ուսական վտանգը առկա է թիւրքիոյ գլխուն, Վանայ ծովէն մինչև Կիլիկիան ծովածոցը: Ճշմարտապէս ազգասեր և խելահաս պատրիարք մը եթէ ամենայն Հայոց Կաթողիկոսութեան երազանքովը Չարին հաճելի երևնալ չըզձայ, կրնայ սքանչելապէս օգտուիլ արդի հանգամանքներէն: Հիւսիսային վտանգին մեծութիւնը իրեն զօրեղ զէնք մը կը հայթայթէ ընդդէմ թիւրքիոյ հայահալած քաղաքականութեանը:

*
* * *

Վերջին պահուն, Թայվոզի մէջ կը գտնենք Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրը, մարտ 31 թուականով.

Հնչակեան Մասնախումբը երէկ հետեւեալ նամակը ուղղեց Հայոց Ազգային Վարչութեան ատենապետ Տատեան Արթին փաշայի. «Օրմանեան սրբազանը նորէն կը հրստարի պատրիարքութենէ, և ձեր Վսեմութիւնը նորէն սի ի բռնի կ'աշխատի հրաժարականը ես առնել տալու համար: Մեր Ազգային Սահմանադրութիւնը և մեր եկեղեցական օրէնքները երբեք այնքան բրտօրէն բռնաբարուած չէին ու մեր ազգը երբեք այնքան հալածուած ու այնքան վայրագօրէն խոշտանգուած չէր որքան Օրմանեան սրբազանի պատրիարքութեան եւ ձեր Վսեմութեան վարչապետութեան օրով: Հնչակեան Յեղափոխական Մասնախումբը ներկայիս կ'ազդարարէ ձեր Վսեմութեան իր որոշումը, որ է թէ Օրմանեան սրբազան պարտի հեռանալ պատրիարքութենէն, և ձեր Վսեմութիւնը՝ ազգային վարչապետութենէն. եթէ ոչ երկուքը ալ մահու պատժին պիտի ենթարկուիք: Մասնախումբս կ'ազդարարէ ձեր որ եթէ մասնութեամբ կամ այս նամակը հաղորդելով, մեր ազգակիցները նորէն ենթարկուին շարչարանքի ու հալածանքի, ձեր Վսեմութիւնը պատասխանատու պիտի բռնուի և պիտի սպաննուի:»

Թայվոզ կը ծանուցանէ միանգամայն թէ, հակառակ սուլթանին ողջուններուն և խոստումներուն, Օրմանեան կը պնդէ հրամարտականին վրայ:

ԱՆԳԼ. ՄԱՄՈՒԼԸ ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆԻ ՄԱՍԻՆ

Մեր ակնկալութիւնը իրականացած տեսնելու զհոհունակութիւնը կուտայ մեզի՝ այն խոշոր յաջողութիւնը զոր Էտկար Շահին ունեցաւ Լոնտոն, իր փորագրութիւնները ի տես գնելով Նկարիչ-Փորագրիչներու Արքայական Ընկերութեան տարեկան ցուցահանդէսին մէջ: Մեր դիմացը ունինք Լոնտոնի մեծագոյն օրաթերթերու, շաբաթաթերթերու, գաւառական լրագիրներու ծրար մը, որոնք ամենքն ալ կը խօսին հայազգի արուեստագէտին գործին վրայ, ամենքն ալ ողջունելով այդ նորեկը, որ իրենց համար նշանաւոր յայտնութիւն մըն է, այնքան որ, իրենց յօդուածներուն մէջ՝ գրեթէ անխտիր՝ ամէնէն աւելի շատ տեղ անոր գործին կը նուիրեն:

Թայվոզ, ցուցահանդէսին նուիրած հատուածին մէջ, մանրամասնօրէն կը խօսի Էլէօի և Շահինի վրայ միայն. — ու պէտք է ի նկատ առնել որ Էլէօ արդէն տարիներէ ի վեր հանրածանօթ արուեստագէտ մըն է որ նկարչութեան այդ ճիւղին մէջ առաջին տեղը կը բռնէ, ու Շահինի կցումը այդ սնունդին՝ գնահատումներուն ամէնէն արժեքաւորն է ինքնին:

«Ցուցահանդէսին մասնակցողներուն երկու ամէնէն կարևորները Բարիզէն են, կ'ըսէ անգլիական մեծ թերթը.

—Պ. Էլիօ, որուն զերազանցօրէն էրկեակ արուեստը քաջ կը աեսնուի ութ պատկերի մէջ, որոնք իր արտադրած լաւագոյն գործերուն չափ լաւ են. և Պ. Էտկար Շահին, որուն գալուստը ուշագրաւ ոյժ մը կ'աւելցնէ ցուցահանդէսին: Իր խոնարհ կեանքի տեսարաններու արտայայտութիւնները՝ մեծ ուժով ու տիրականութեամբ կատարուած են, ու կատարելապէս ուշադիր մնալով իր արուեստին հասողութեանը: Իր արտադրութեանց էն լաւն է թերեւ «Ուրբաթ օր ապուրի բաշխումը» կոչուածը, որ ամէն կերպով վարպետի գործ մըն է:»

Մորնիկի Բոսպ կ'ըսէ թէ Պ. Շահին զէմքերու արտայայտութեան մէջ զերազանց է, ու Տէյլի Նիռազ. «Պ. Շահինի գալուստը մեծ ուրախութեամբ կ'ողջունենք: Իր գործը տարօրինապէս ուժով ու անակն է, և շատ նրբութիւն կայ իր «Լա թէոաս»ին երկու կիներուն զէմքի արտայայտութեանը մէջ, մինչդեռ իր «Ուսումնասիրութիւն պառաւ կնկան»ը փայլուն գործ մըն է, ո՛չ միայն իր երանգներուն ուժովը, այլ նկարագրովը: Իր ուրիշ մէկ գործը, «Թէննիս խաղացող օրիորդը», Էլիօի մը նրբին շնորհալուութիւնը ունի:»

Մորնիկի Լյուրը՝ «Թափառիկ Մուրացկան»ը յոյժ նշանաւոր եւ անմիջապէս աչք աննող գործ մը կ'որակէ, յղացմամբ ու արտայայտութեամբ եզական, Մորնիկի Հէրըլտ՝ ճարտար կը գտնէ Շահինի նկարները, «մասնաւորապէս Շաքօ Ռուժը, որուն մէջ զէմքերը ողբերգական յատկանիշ մը ունին», Կլոպ ուշադրութեան արժանի կը համարի ամբողջ գործը, և Էքօ, ցուցահանդէսին մէջ ի տես զրուած հին նկարներու վրայ խօսելէ յետոյ, կը յարէ. «Անցնելով նոր գործերու, ամէնէն առաջ կը հանդիպինք Պ. Էտկար Շահինի, ու թէպէտ կրնայ ըլլալ որ իրեն մեղադրիք իր ընտրած նիւթերուն ակնահասնոյ չըլլալը, կարելի չէ սակայն որ չսքանչանաք այն ճարտարութեան վրայ որով ձեր դիմացը կը բերէ մարդկային տիպարներ՝ «Թափառիկ Մուրացկան»ին եւ «Շաքօ Ռուժ»ին մէջ: Գեղեցկութեան քիչ շատ քնահատում մը կայ «Լա թէոաս»ին մէջ, ու երկու կիներուն զէմքերը արտայայտութեամբ լեցուն են: Մեծ գործով մը ու թափանցողութիւն մը նշանաւոր կ'ընծայեն իր «Ուսումնասիրութիւն պառաւ կնկան»ը, որովհետեւ պառաւին զէմքը շատ խոր ծերութեան գեղեցկութիւնն ու տարօրինակ սրտառուչութիւնը ունի:» Իսկ Սդար, Շահինի անհատականութիւնը և արհեստագիտական ճարտարութիւնը հաստատելով, կը նշանակէ այդ անունը՝ ակնզէտ հետեւելու համար անոր ապագայ ցուցահանդէսներու մէջ:

Շաքաթաթերթերը օրաթերթերէն նուազ գովաբան չեն: Սընտէյ Սըն կը գրէ. «Պ. Շահինի՝ օր նորեկ մըն է Անգլիա՝ աշխատութիւնները ցուցահանդէսին ամենէն շահեկան յատկանիշը կը կազմեն: «Թափառիկ Մուրացկան»ը, թաղծալից ծեր գատարկապորտ մը՝ փայտէ ոտնամաններու մէջ, կալարնիի արժանի է, ինչպէս եւ «Լա թէոաս»ը և «Շաքօ Ռուժ»ը: Անոնց մէջ տեսնուած զը-

ծագրութեան ճշգրտութիւնը և արհեստագիտական ճարտարութիւնը՝ Պ. Շահինը արդի փորագրիչներուն եւ առաջին կարգը կը դասեն:» Ուրիշ թերթի մը համար, Միլէի ռզին կայ այդ «Թափառիկ Մուրացկան»ին ուսումնասիրութեանը մէջ: Չանց անելով ուրիշներ որոնք կը շեշտեն երիտասարդ արուեստագէտին «արտասովոր ոյժն ու զգացողութիւնը», «անկեղծութիւնը, իրական ճաշակն ու տաղանդը», կ'անցնինք Օպսերվըրի գեղեցիկ հատուածին. «Նորերէն ամէնէն բարձր սպաւորութիւն ընող արուեստագէտը Պ. Շահինն է: Իրեն յատուկ նորանշան խառն մէթոտ մը ունի իր աշխատութեանը մէջ, բայց տարօրինապէս վստահ իր յատուկ բերելիք սպաւորութեանցը: Մեծութիւն մը կայ «Պառաւ կնկան» ուսումնասիրութեանը պէս օրինակներու մէջ, որ իրաւոյնէ ազգակտն է: Բարոյախօս մըն է ինքը միանգամայն, ինչպէս եւ ճարտար գործածող մը իր սայրին: Իր «Թափառիկ Մուրացկան»ը տրամօրէն ճշմարիտ արտայայտութիւնը կուտայ մեզի Ֆրանսայի գաւառական կեանքին: Դարձեալ, ընկճուած ինկած գործաւորին զէմքը՝ «Ուրբաթ օր ապուրի բաշխում»ին մէջ, ահռելի էլ մը պիտի կրնար ներշնչել Չուլսի, մինչդեռ մանկամարդ զուարթ կիները՝ գաւաթին առջևնին՝ «Լա թէոաս»ի մէջ, և «Շաքօ Ռուժ»ի գտնէ պառանները իրապէս ողբերգական ցուցումն են «Եթէ երիտասարդութիւնը գիտնար, եթէ ծերութիւնը կարենար»ին, ահագին ուժով առի, անոր համար մանաւանդ հզօր՝ որ այնքան զերծ են շափազանցութենէ:»

Երկար պիտի ըլլար ինչը մի առ մի գաւառական թերթերը որոնք այնքան տեղ կուտան Լոնտոնի գործերուն: Յիշելով մէկ քանին, Սքոդամեն կը հաստատէ Շահինի ուսումնասիրութիւններուն մէջ մարդկայնութեան ուժով ճօրը, Կլասիօ Հէրըլտ կանգ կ'առնէ թափառիկ մուրացկանին ուժով և ինքնատիպ աշխատութեան առջեւ, Պիլմիկեհիմ Տէյլի Բոսպ կը գտնէ թէ Շահին գտող ու տառապողներուն համար նոյնը կ'ընէ ինչ որ Էլիօ՝ Բարիզի զրգոյն ու վայելուչ աղջիկներուն համար: Մաւշեղջըր Կարտիլըն զերազանցապէս ճարտար կը գտնէ այդ ուսումնասիրութիւնները, որոնց, կ'ըսէ, ամէնէն նշանաւորն է՝ արհեստագիտական տեսակէտով՝ ամուր ձեռքով մը կերպաւոր, ուսած Պառաւ կնիկը:

Գուլով զուտ գեղարուեստական թերթերուն որոնք ամսազլխուն կը հրատարակուին, ոչ նուազ կարևոր տեղ մը պիտի տան անշուշտ Շահինի գործին: Կ'իմանանք թէ Տէի Արդիադ գեղարուեստական մեծ թերթը յօտերս պիտի արտատպէ այդ նկարներուն երեքը:

Յաջողութեան և համբաւի ճամբան է որ կը բացուի մեր երիտասարդ տաղանդաւոր բարեկամին առջեւ, ու սրտանց կը խնդակցինք իրեն:

ԹԻԻՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

ՌՈՒՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Իրատէն ելաւ թէ ոչ:

Գերմանական ու անգլիական լրագիրները անցեալ շաբթուն վերջերը հրատարակեցին թէ սուլթանը ընդունած է Ռուսիոյ պահանջումները՝ հիւսիսային Փոքր-Ասիոյ մէջ շինուելիք երկաթուղիներուն մասին, ու առ այդ հարկ եղած իրատէն հանած է: Բայց նորագոյն լուրերուն նայելով, խնդիրը նոր քայլ մը առած չէ, ու սուլթանը դեռ կը դիմանայ:

Այսօր, աւելի ստուգապէս գիտնալ կը կարծենք ուսական պահանջումներուն բնոյթն ու ծաւալը:—Թիւրքիա պէտք է յանձն առնէ «Սե Ծովու աւազանին մէջ» ո եւ է երկաթուղի չէնեղ՝ առանց նախապէս յարմարելու Ռուսիոյ հետ, որուն կառավարութիւնը իր կողմէն յանձն կ'առնէ, այն պարագային որ Դուռը այդպիսի ձեռնարկութեան մը համար հարկ եղած զրամապլուսը չունենայ, պէտք եղած զրամապլուսը տալ Դրան:

«Սե Ծովու աւազան» խօսքը քիչ մը տարտամ է: Ստոյգ տեղեկութեանց նայելով, Ռուսիա այդ խօսքով կը հասկնայ զի՞ մը որ Էրէյլիէն (Սե Ծով) մեկնելով դէպի հարաւային արեւելք, անցնէր Էնկիւրիէն, յետոյ Սըվազէն, յետոյ Տիարպէքիի հիւսիսակողմէն մինչեւ սահմանադրուելը, իր մէջը առնելով այդպէս Գաթալիսի, Տրապիզոնի, Էրզրումի, Վանի նահանգները, եւ Սըվազի, Խարբերդի ու Բաղէշի նահանգներուն մեծագոյն մասը, ու դուրս թողնով Տիարպէքիը, որ ուսական շրջանակէն դուրս կը մնայ և կը վերաբերի Անատոլուի և Պաղատատի գերմանական երկաթուղիներուն գրութեան, որուն ընդհուպ պիտի միացուի երկաթուղիով մը:

ՌՈՒՄԻՈՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կը տեսնուի որ Ռուսիոյ ուզածը պզտիկ բան մը չէ, ու բնաւ մտադիր չի թուիր բանի տեղ զննելու սուլթանին մերժումը: Զինուորական պատրաստութիւնները, զորոնք կը յիշատակէինք անցեալ անգամ, շարունակուելու վրայ են: Վարչաւայէն կը ծանուցուի թէ ուսական շինարարութեան իշխանութեանց գաղտնի հրաման գացեր է Պրուսիոյ ի կայարանին մէջ պատրաստ պահել երեք հարիւր վակոն՝ զինուորական փոխադրութեանց համար: Մարտ 26 թուականով Օտէսայէն կը հեռագրեն Սրահուարտի. «Ա՛յ կարելի չէ ո եւ է տարակոյս ունենալ այժմ Հարաւային Ռուսիոյ մէջ լրացուելու վրայ եղող պատերազմական պատրաստութեանց մասին: Իբր 250,000 զօրք արգէն ի գէն կոչուած են՝ գործօն ծառայութեան համար, եւ Սե Ծովու նաւատորմը, իր փոխադրանաւերով, կազմ ու պատրաստ է ու հրամանի միայն կը նայի: Կովկասեան հայկական սահմանազիւսին վրայ ուսական պահակա-

զօրքը սովորականէն (40,000 հոգի) չորս անգամ աւելի է այժմ, եւ գործօն ծառայութեան համար սպառազինուած:»

Երկու շաբթ առաջ, երբ այս պատրաստութեանց լուրը մէջտեղ ելաւ, Բեդրպուրկէն իրողութիւնը հերքուեցաւ, և ըսուեցաւ թէ Սէվասթապոլի մէջ մէկ զօրագունդի և երեք հրետանիի (18 թնդանօթ) համախմբումէն անդին չէր անցնէր գործը: Շաբթ մը յետոյ, Վիէնայէն կ'ըսուէր թէ Աւստրիոյ պաշտօնական շրջանակներուն մէջ բնաւ հաւատք չեն ընծայեր Ռուսիոյ պատերազմական պատրաստութեանց լուրերուն, եւ եղած շարժումներն ալ պարզապէս այս տարի Հարաւային Ռուսիոյ մէջ կատարուելիք սահմանափակումներուն կը վերաբերին:

Տարեկան սահմանափակումներուն հետ վերաբերութիւն ունենան թէ ոչ, Ռուսիա կ'ուզէ որ այդ պատրաստութեանց իրական կամ մտացաւին՝ լուրերը հասնին կ. Պոլիս և հին իրենց ազդեցութիւնը գործեն: Քրեօյց Չայդառնի կ'ըսէ. «Վերջին օրերս, լուր տրուեցաւ թէ Հարաւային Ռուսիոյ մէջ պահեստի զօրքերուն ի գէն կոչուած զարքեր է: Ռուսիա սակայն բնաւ ծածուկ չպահեց պահեստի զօրքերուն կոչումը, և ստոյգ է որ Հարաւային Ռուսիոյ օտար հիւպատոսները տեղեկութիւն ստացան այդ մասին: Կը կարծուի թէ զիտմամբ էր որ այդ կարգադրութեանց լուրը մէջտեղ հանուեցաւ, և ասոր նպատակն էր փափաքելի ազդեցութիւնը առաջ բերել Դրան վրայ, որպէս զի աւելի խօսմանուկ դառնայ զանազան առկախ հարցերուն մասին:»

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բանակցութիւնները կը շարունակուին Ռուսիոյ եւ Թիւրքիոյ միջև, եւ շատ լրագիրներ կը ծանուցանեն արգէն թէ Թիւրքիա սկզբունքով ընդունած է ուսական պահանջումները, և թէ մէկ քանի մանրամասնութիւններ միայն կը մնան կարգադրելիք:

Կը կարծուի թէ Դրան փնտռածը այժմ ուրիշ բան չէ բայց եթէ այնպիսի ձև մը տալ կնքուելիք պայմանագրութեան որ Թիւրքերուն զիւրազգածութեանը չզրպչի, եւ երկաթուղիներու արտօնութիւնը սուլթանին կողմէ բարեկամական շնորհի մը կերպարանքը առնէ: Իրատէն, Ֆրանքֆորտի Չայդառնի խօսքին նայելով, սա ձեւը պիտի ունենայ:

«Այսուհետեւ, Սե Ծովու աւազանին մէջ երկաթուղիներու շինութիւնը եւ վարչութիւնը, բացի արգէն այլ լուր շնորհուած երկաթուղիներէն, ուսական պատերազմական միայն պիտի շնորհուի՝ ճիշդ նոյն պայմաններով որոնք ուրիշներու տրուեցան Պաղատատի երկաթուղիին համար: Վատահօրէն կը յուսանք թէ մեր բարեկամ զրացիին զրամատէրները ու արհեստագիտական մեծ կարողութիւնները մեր յոյժ սիրեցեալ ժողովրդին տրամադրութեան ներքեւ պիտի դրուին այս նպատակին համար, որով պիտի նպաստեն մեր երկրին ալ աւելի զարգանալուն:

«Կը հրամայենք որ այս հրովարտակին բովանդակութիւնը պաշտօնապէս հաղորդուի ներկայացուցչին

Ռուսիոյ վեհափառ կայսեր, որ, համոզուած ենք, հաճու-
թեամբ պիտի ընդունի զայն:»

Սրբաւարտի վիճակի թղթակիցը հետաքրքրական
տեղեկութիւններ քաղած է բանակցութեանը ընթացքին
վրայ: Բանակցութեանց սկիզբը, Ռուսիա կը պահանջէր
որ պայմանագրութեան մէջ ըստի թէ թիւրքիս կը խոս-
տանայ երբեք երկաթուղի չշինել հիւսիսային փոքր-Ասի-
ոյ մէջ: Երբ թիւրքիոյ արտաքին գործոց նախարարը
հարցուց թէ ինչո՞ւ իրենք ազատութիւն ունենալու չէին
երկաթուղի շինելու իրենց սեփական երկրին մէջ, ուս
զեսպանը պատասխանեց թէ թիւրքիս, երկաթուղի շինե-
լու համար անձնական դրամ ունենալէ առաջ, պէտք է
իր պատերազմական տուգանքը վճարէ. իսկ եթէ այդ
գրամը ստարներէն պիտի առնէ, ինչո՞ւ իր ուս բարե-
կամներէն չառնէ: Խօսակցութեան ընթացքին մէջ, ուս
զեսպանը այնչափ յաճախ գործածեց «բարեկամութիւն ու
պաշտպանութիւն» բառերը, որ թիւրք նախարարը բացէ
ի բաց հարցուց. — «Այնպէ՞ս մը հասկնալու ենք թէ ամ-
բողջ թիւրքիան, կամ գոնէ փոքր-Ասիան, Ռուսիոյ թե-
ւարկութեան ներքե պիտի առնուի», ու ազդուօրէն բո-
ղոքեց այդպիսի գաղափարի մը դէմ:

Ռուսական զեսպանին պատասխանը, կը շարունակէ
Սրբաւարտ, յայտնի չէ. բայց ըստ որում Ռուսիա ձեռն
եթէ ոչ էութեան՝ մէջ տեղի տուաւ, սկզբունքով ընդունելով
թէ թիւրքիս կրնայ — իրաւ է թէ Ռուսական դրամով մի-
այն — երկաթուղիներ շինել «Սեւ Ծովու աւազանին մէջ»,
կ'ենթադրուի թէ զեսպանը ուղղակի թեւարկութիւն չպա-
հանջեց, և թէ, մինչեւ աստիճան մը, թիւրքերուն զի-
բազգածութիւնը խնայուեցաւ:

Թիւրք բանակցողներէն մին վարպետութեամբ յիշեց
երկաթուղիի արտօնութիւնը զոր Ռուսիա իր ստառ տա-
րի առաջ Պարսկաստանի մէջ ձեռք բերաւ և որ մինչեւ
հիմա մեղմալ տառ մնացած է, քանի չոր ո՛չ Ռուսիա եւ
ո՛չ ուրիշ մէկը երկաթուղի շինելու վրայ է այդ երկրին
մէջ: Ռուսական պատասխանը սա եղաւ. « — Այո՛, կըր-
նայ ըլլալ որ նոյնը պատահի: Ռուսիա աճապարանք չու-
նի թիւրքիոյ մէջ երկաթուղի շինելու, ուրիշ տեղ պէտք
եղածին չափ զբաղած ըլլալով հիմակ. բայց որովհետեւ
կ'ուզէ ամէն պատահականութեան առջեւ պատրաստ գըտ-
նուիլ, կը պնդէ իր խնդրանքին վրայ՝ թիւրքիոյ իսկ շա-
հուն համար:»

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Դրոսէն զիտողին համար, շատ շահեկան տեսարան
մըն է հետեւելը այն եռանդին որով անգլիական մամուլը
կը նկրտի ցոյց տալ թէ Ռուսիոյ այս բռնած նոր զիբը՝
սպառնալիք մըն է Գերմանիոյ շահերուն համար, մինչդեռ
գերմանական մամուլն ալ կ'աշխատի ապացուցանելու թե
գործին մէջ միակ փաստուողը Անգլիան պիտի ըլլայ:

Սրբաւարտի վիճակի թղթակիցը կը գրէ. «Ռու-
սիա մեծ ճնշում կը բանեցնէ սուլթանին վրայ՝ ուզածը

ձեռք բերելու համար անյապող, ու այսպէս Գերմանիոյ
դիտաւորութեանց առաջըր առնելու համար՝ առանց Գեր-
մանիոյ հետ բացէ ի բաց գժտութեան մը: Ռուսիա կը
վախնայ որ սուլթանը ալ աւելի արտօնութիւններ չշնոր-
հէ իր բարեկամին՝ վիլհելմ կայսեր, և որպէս զի ուշ
կամ կանուխ Գերմանիոյ հետ խնդիր չունենայ՝ եթէ
փոքր-Ասիոյ մէջ գերակշիռ զիբը մը բռնէ ան, ուսական
զիւանագիտութիւնը խոհեմութիւն կը համարի հիմակ-
ուրնէ սուլթանին կոկորդէն սղմել և խոստումներ կորզել
անկէ: Ձեռ կ. Պոլսոյ թղթակիցը և կ. Պոլսէն ուրիշ
գրողները այն տպաւորութեան ներքեւն թէ Ռուսիա և
Գերմանիա ո՛չ թէ իրարու դէմ կը մրցին, այլ համընթաց
կը քալեն, և առիկա իրօք ճշմարիտ է առեւտրական սէն-
տիքաներու, երկաթուղիներու արտօնութիւններու ևայլն
համար. բայց իմ տեղեկութիւնս — քաղուած այնպիսի
աղբիւրներէ որոնք բացարձակապէս արժանահաւատ ելան
ուրիշ եւ կարևոր աղբիւրներու մէջ — սա է թէ Ռուսիոյ նը-
պատակը ո՛չ այնչափ առաւելութիւններ ձեռք բերել է հի-
մակուհիմա, հապա թող չտալ որ առաւելութիւններ շը-
նորհուին Գերմանիոյ, և թէ ի՛նչ որ կը պատահի այժմ ու
պիտի պատահի, նպատակ ունի պահպանել այն զիբ-
ըր զոր Ռուսիա այնչափ զոհողութեամբ վաստակած է
Արևելքի մէջ:»

Շարաթ մը յետոյ, նոյն թղթակիցը դարձեալ կը պըն-
դէր թէ Ռուսիա առ այժմ նպատակ չունի թիւրքիոյ մէջ
երկաթուղի շինելու. իր այժմու ձեռնարկներուն նպատակը
ուրիշ բան չէ բայց եթէ արգիլել նոր արտօնութիւններու
շնորհուիլը Գերմանացիներու:

Պերլինէն ուրիշ անգլիացի թղթակից մը կը գուշա-
կէ թէ շատ շանցած գերմանական և ուսական շահերը
կուրի պիտի բռնուին Պարսից ծոցին, փոքր-Ասիոյ և Ձի-
նաստանի մէջ, և Սրբաւարտի Օտտօայի թղթակիցը կը
թեւադրէ թէ սուլթանը Գերմանիայէն զրոգուած է որ կը
զիմարէ Ռուսիոյ պահանջումներուն:

Ուրիշ անգլիական լրագիր մը վախ կը յայտնէ թէ
եթէ սուլթանը, «Ռուսիոյ ձեռքի տակէ լարած մեքենա-
յութեանց համաձայն», չուզէ ընդունիլ Պաղատատի եր-
կաթուղիին համար քիլոմետր զլուս 10,000 մարքի ե-
բաշխաւորութիւն մը ստանձնել, այդ Պաղատատի արտօնու-
թիւնը անարժէք բան մը պիտի դառնայ, որովհետեւ պիժը շե-
նութեան այնքան զժուարութիւններ ունի որ առանց
այդպիսի երաշխաւորութեան մը պիտի չլինայ ծախքը
զոցել:

Իսկ գերմանական մամուլը այդպիսի երկիւղներէ բո-
լորովին ազատ է: Բռայ յօդուած մը հրատարակեց ուս-
ական աշխարհավարութեան վրայ, և մասնանիշ ըրաւ
Անգլիոյ վրայ Ռուսիոյ յաղթանակը արևելքի մէջ: Ն. Տ.
Ալիեմայնէ Չայդուանի պաշտօնական ձեւ ունեցող հաս-
ուածով մը բացարձակապէս հերքեց այն գուշակութիւնը
ձէ ուսական եւ գերմանական շահերը շատ չանցած գէմ
դէմի պիտի գան Պարսից ծոցին, փոքր-Ասիոյ և Ձինաս-
տանի մէջ: Նիսուպի Նախրիխդը կը գրէ թէ «ուսական

պահանջումները ու է կերպով չեն փաստեր Պաղտատի գերմանական երկաթուղիին, քանի որ Ռուսիոյ իրեն վերապահած շրջանակը Անաստուի երկաթուղիին շահուն շրջանակէն բաժնուրդին գուրս է: Գերմանացիները ու է պատճառ չունին ենթադրելու թէ Ռուսիա երբեք փորձած ըլլայ Պաղտատի երկաթուղիին ձեռնարկութեան ի գլուխ ելլելը արդիւն: Ռուսիոյ գլուխը գտնուող մարդիկը այնչափ լաւատեղեակ են որ ամենագոյն տարակոյս չունին գերմանական ձեռնարկութեան գուտ տնտեսական բնութեանը մասին:

«Յիշեալ երկու շրջանակներուն գծուը քաղաքական երկու ն կատարութեան վրայ հիմնուած է թերևս: Նախ, Բեյրութուրկ սուլթանի շահ ունի որ թիւրքիա ու է կերպով կարող չըլլայ երկաթուղիներու ցանցով մը ծածկել Հայաստանը: Երկրորդ, անիկա մեծ շահ ունի թող չտալու որ ուրիշ ու է պետութիւն մը ոտքը դնէ Էրէլլիին դէպի արևելք գտնուող նաւահանգիստներուն մէջ, ուսկից յաջող օտնձգութիւն մը ընել կարելի է անոր պարսկական շահուն շրջանակին մէջ: Գերմանիոյ տեսակետով, կարելի չէ բան մը ըսել անոր դէմ, քանի որ Գերմանիոյ շահը չի պահանջեր Պարսկաստանի մէջ ուսական ազդեցութեան ծաւալմանը դէմ աշխատիլ:»

ԱՆԳՆՈՅ ԴԻՐՔԸ

Անգլիոյ բռնած զիրքը այս ամէնուն մէջ, ու է կերպով երևան չեկաւ: Ըսուեցաւ թէ սուլթանը երկու անգամ անգլիական կառավարութեան գիմեր է՝ օգնութիւն խնդրելով, և ցուրտ պատասխան մը ստացեր է: Լուրը սակայն ազդուապէս հերքուեցաւ անգլիական աղբիւրէ: Աւստրիոյ մէջ, Անգլիոյ բռնած այս անտարբեր զիրքը կ'ուզեն բացարեւ սա կերպով թէ Լոնտոնի և Բեյրութուրկի միջեւ համաձայնութիւն մը գոյացած է, որուն համեստ Անգլիա կատարեալ ազատութիւն կը թողու ուս կառավարութեան ընդդէմ սուլթանին, մինչ միւս կողմէ Չարը ձեռնպահ կը մնայ Հարաւային Ափրիկէի խնդրներուն մէջ:

Ինչ ալ ըլլայ անգլիական կառավարութեան գաղտնի քողաքականութիւնը, անգլիական մեծագոյն թերթերը, թայմզ ու Մորնինգ Բուդ, յայտարարեցին թէ թիւրքիոյ ներկայ ճգնաժամին մէջ Անգլիա բոլորովին անտարբեր է: Ժամանակ մը կար, կէս դար առաջ, կ'ըսէ, որ Փոքր-Ասիոյ հիւսիսային-արևելեան բոլոր երկաթուղիները ձեռք անցընելու ուսական արգի պահանջուը՝ մեծ յուզում պիտի պատճառէր մեր հայրերուն: Այսօր, կըրնանք փիլիսոփայական հանդարտութեամբ, եթէ սչ անկեղծ անտարբերութեամբ նայիլ այդ պահանջումներուն վրայ, որքան ալ տարապայման երևան: Երբ խրիմի պատերազմին պատրանքները տակաւին մեր քաղաքական տեսողութիւնը կը մթազնէին և երբ տակաւին հաւատքնիս խախտած չէր թէ թիւրքը կրնայ վերանորոգուիլ, կ'աշխատէինք թիւրքիոյ բարայական ու նիւթական զար-

գացումը առաջ վարել: Այսօր, ո'չ այդ տեսողութիւնը ունինք, եւ ո'չ այդ փափաքը: Կրնայ ըլլալ որ մեր մէջէն ումանք ափսոսան այն առիթներուն համար զորոնք կ'որսընցուցինք՝ Գերմանիոյ տրուած երկաթուղիի արածութիւնը ժամանակին մենք ձեռք չբերելով: Բայց անկեղծօրէն կը խոստովանինք թէ անդառնալի կերպով կ'որսնցուցած ենք այդ առիթները, եւ շատ ալ չենք ցաւիր որ ուրիշներուն ձեռքը ինկած են: Մենք, մեր նաւային զօրութեանը եւ Բարեյուսոյ Գլխէն զէպի Արևելք տանող անձեռնմխելի ճամբուն կրթնած, կրնանք հանդարտ հետաքրքրութեամբ մը հետևիլ Կ. Պոլսոյ մէջ մզուած զիւանագիտական մարտին:

Դէպքերը ցոյց պիտի տան ընդհուպ թէ անգլիական մեծ թերթին այս խօսքերը իրօք անկեղծ համոզման մը արդիւնք են, թէ չէ թելադրութիւն մը սուլթանին ուղղուած, հասկցնելու համար անոր թէ Անգլիոյ խնամակալութեան հեռանալով ինքզինքը միայնակ ու անպաշտպան պիտի գտնէ իր հիւսիսի հզօր զրացիին դէմ:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

Օտէսայէն կը հեռագրեն մարտ 30 թուականով թէ, Կ. Պոլսէն ուսական կէս-պաշտօնական աղբիւրէ առնուած լուրերու նայելով, սուլթանը մեծ ահուզողի մէջ է Սիւ Մովու նաւատորմին և սահմանազխին զօրքերուն շարժման մէջ զրուելէն, և թէ ըստ ամենայն հաւանականութեան անյապաղ պիտի կատարէ ուսական պահանջումները:

Կ'ըսուի թէ զեսպանը կրցեր է Դրան գլուխը մըսցնել թէ իր կառավարութիւնը մահու եւ կենաց խնդիր մը կը նկատէ ասիկա, թէ ուսական նաւատորմիղը պատրաստ է զբաւելու Տրապիզոնը և Սինոպը, թէ իբր 200,000 զօրք պատրաստ կեցած են՝ մասամբ կովկասեան սահմանազխին երկայնքը և մասամբ ժօտակայ նահանգներուն մէջ: Սէվասոպոլսէն և Օտէսայէն ահազին թիւով զօրք նոյնհետայն կրնայ Անաստուի ծովեզերքը փոխադրուիլ:

Այս բոլոր պատրաստութեանց մասին տեղեկութիւն տրուած է սուլթանին եւ Դրան:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին պահուն հեռագիրը լուր կը բերէ թէ սուլթանը տեղի տուեր է եւ ստորագրեր է պայմանագրութիւն մը որով կ'ընդունի ուսական պահանջումները, որոնց մասին յաջորդ անգամ կը խօսինք:

Չարին կառավարութիւնը, ի փոխարէն, ա'լ պիտի խնդիր չյարուցանէ կովկասի հայ գաղթականներուն դարձին մասին:

ԼՈՒՐԵՐ

ԳՍՑԹԱԿՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկկուսան անգլիական քերթերուն մէջ ցառով կար-
դացիներ հետեւեալը .

« Լոնտոնի արևելեան Սեյնթ-Ճորձ քաղիկն մէջ մեծ
յուզոսով կը պատճառեալ այն յոտըր քե Պ. Քրիստափոր Պալ-
եան, որ այդ շրջանակին կողմէ Լոնտոնի Քաղաքային
Խորհրդին անդամ ընտրուած է, ոստիկանութեան կողմէ
կը փետտուի 5000 անգլ. ոսկիի արժողութեամբ մարգը-
րիտ առած փախած ըլլալու արեստանոտութեամբ: Կա-
տարուած ընկերակներ կը տեսնուի քե Պ. Պալեան որ 1,
Ոռուտարք-Տօրտ, Շերհրտ'զ-Պոռչ կը բնակի, չոր մըր-
գեղեկի վաճառական էր 19, Տրենդան'զ-Հիլլ, Սիդի, եւ
իրեն դեմ ձերբակալման հրամանագիր էլած է մարտ 4-ին
ի վեր. բայց միևնչեւ հիմա յիշեալ պարտեր յաջողած է
օձիքը ձեռք չի տալ: Պ. Պալեան 1898-ին ի վեր Լոնտո-
նի Քաղաքային Խորհրդին անդամ էր, և Սեյնթ-Ճորձի
շրջանակին ազատական ու արևմտական որոշուած ընտ-
րելին էր երեսփոխանական յառաջիկայ ընտրութեանց հա-
մար: Պ. Պալեան Հայագրի մըն է: »

Անգլիական քերթերին շատերը, ինչպէս Թայմզ,
գանց ըրած են յիշատակել Պ. Պալեանի ազգայնութիւնը:

Երբ, երկու տարի առաջ, տեսանք քե այդ Հայը, —
որ պզտիկոց եկած Լոնտոն հաստատուած էր իբր ան-
նշան խանութպան մը և հետգնետե առաջ երթալով՝ հան-
րային գործունէութեան մէջ մտած ու ազատական ընկե-
րակցութիւններու անդամակցելով դիրք մը շինած էր ի-
րեն, — յաջողեցաւ Լոնտոնի քաղաքային Խորհրդականի
քաղաքապետ շատ քարձր դիրքին հասնել, ասիկա մեր
ցեղին համբաւին համար շատ նպաստաւոր հանգամանք
մը կը նկատուի, մանաւանդ որ լրագիրները իր ընտ-
րութեանը առիտ կը հռչակէին իր հայ ազգայնութիւնը,
և ամեն տեղ կը ձանձնուէր իբր Խորհրդին «հայ ան-
դամ»: Ինք, մարպիկ ու յեզոզանի, գիտցած էր Հա-
յոց նկատմամբ դեռ այն ատեն տիրող մեծ համակրանքին
օգտուելու ու այսպէս իր ընտրութիւնը յաջողցնել: Ծառ-
բան բացուած էր իր առջև, եւ շատ հաշտանական էր որ յա-
ջողէր միևնչ. Անգլիոյ Խորհրդարանը մտնել: Ու հիմակ,
ինչ անկողմ: Հասարակ գողի մը պէս, ոստիկանութիւնը
կը փետտե գանի, եւ երբ ձեռք ձգելու ըլլայ, եղեսնական
ատենակն առջև. հայ անուներ այդ անարգ սրիկային պատ-
ճառաւ ցեխի մէջ պիտի քաշկրտուի: Ինչ արտ, և ինչ ցառ:

* * *

Լոնտոնի ոստիկանութիւնը հետեւեալ գեկոյցը հրա-
տարական է.

« Կը փետտուի, 5000 ու առջև ոսկիի արժեքով
մարգրիտ (որոնք այժմ գտնուած են) գողցած ըլլալու հա-
մար ձերբակալման հրամանագրով մը, Քրիստափոր

Պալեան, 32-ին 35 տարեկան. հասակ, 5 ոտք 6 մատեն
7 մատ. դեմքը՝ տեղոյն. ճախը աչքը չի կայ (կոպերը
իրար փակած են.) մազը և բարակ պեխերը սեւ. ոտնե-
րը լայն. շնորհքով հագուած. սովորաբար, գորշ վերար-
կու մը և քաղիքի սև գլխարկ կը կրէ: Միևնչ. վերջերս,
Լոնտոնի Քաղաքային Խորհրդին անդամ և երեսփո-
խանական ընտրելի Սեյնթ-Ճորձ-ի-տեմի-Խաղի մէջ. նոյն-
պէս անդամ Նեյշըրը Լիպըրը Գլըպի: Մայրը կը բնա-
կի 1, Ոռուտարք-Տօրտ, Շերհրտ'զ-Պոռչ: Եղբայր մը ու-
նի՝ Տարրի (սե.նշ) անուներով ձանձնուած, Լոնտոնի ոս-
տիկանութեան քաջ ծակօր, որ ձիարշաւի գրեւէներու
միջնորդ է և Էմբայր ու Գաֆի Մոնիքօ կը յաճախէ.
(կերպով մը, վատանամբաւ տեղեր են աստեղ) Պալեան,
մարտ 4-ին փախելէ առաջ, չոր մըրգեղեկի վաճառական
էր 19, Ս. Տրենդան'զ Հիլլ, Սիդի: Երևած է Խոզի: —

Ահաւասիկ ինչ պարագաներու տակ կատարուած է
գողութիւնը, Գրեւ Էրօ:

Պալեան կ'երթայ կը գտնէ Հայրը-Կարտընի մօտե-
րը գտնուող գոմարավաճառ մը և անկից մարգրիտ կ'առ-
գէ՝ տակիլ ցոյց տալու համար, բերով քե Լոնտոնի
Քաղաքային Խորհրդին իր յառաջիկանական անդամ-
կիցներէն յանձնախուշ մը, որ շատ երեւելի անդամի
մը կ'ընդը նուէր մը ընել կ'ուզէ, իրեն յանձնած է յարմար
ընծայ մը որոշել: Պալեան կ'երթայ անմիջապէս գրա-
ւի կը ղեկ մարգրիտները, և առած դրամով կը փախչի:
Գոմարավաճառը, տեսնելով որ մարգրիտները որոշ-
եալ ատենին ետ չեն դարձնիր, փետտուողի կ'ելլէ և
կը տեղեկանայ քե ամբողջ պատմութիւնը շինուած է:
Պալեանի քե՝ գրասենեակը և քե՝ տոնը տեղեկութիւն
հարցուելով, կը տեսնուի քե երկու երեք օրէ ի վեր մէջ-
տեղը չի: Գործը անմիջապէս ոստիկանութեան իմաց կը
տրուի: Երանուկ ոստիկաններու գործունէութեան շնոր-
հիւ, մարգրիտները կը գտնուին այն խանութպանին քո-
վին որուն քով գրասի գրուած էին: կը կարծուի քե Պալ-
եան Անգլիային հետագած է:

Մեր տեղեկութեանցը համաձայն, այս գողութեան զոն
գացած անձը Հայ մըն է, Պ. Ներսիսեան, պարսկական
դեր-հիշատու Լոնտոն: Պալեան 2000 անգլ. ոսկի
առեր է՝ մարգրիտները գրասի ղեկելով: Հիմակ խնդիր է
քե վնասը ո՞վ պիտի քաշէ, գոմարավաճառը, քե ո՞չ գը-
րասի վրայ փոխատուէ:

Լոնտոնի Քաղաքային Խորհրդը արդէն երեք շա-
բաթին առելի է իր անդամակցութեան ջնջած է Պալեանը:

ՀԱՍՑԻ ՈՒ ԲԱՍՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին
ղրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.